# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 4 (1654) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 8, 2014
VOLUME 34, NO. 4 (1654) SATURDAY, FEBRUARY 8, 2014

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Սարգիս Հացպանեան,-«Օճալանի Նամակը Ուղղուած է Թրքական Իշխանութիւններուն՝ Քան Թէ Հայութեան»




*Սարգիս Հացպանեան Երեւանի մէջ կայացած մամլոյասուլիսի ընթացքին*

*Թուրքիոյ Բանուորական Կուսակցութեան բանտարկեալ Ղեկավար Ապտուլա Օճալան, Պոլսոյ մէջ լոյս տեսնող հայկական «Ակօս» թերթին յղուած նամակի մը մէջ կոչ ըրած է Հայ համայնքին՝ նեցուկ կանգնելու Թուրքիոյ մէջ Քուրտ ժողովուրդի իրաւունքներուն: Նոյն նամակին մէջ ան կոչ ըրած է նաեւ Թրքական կառավարութեան հաշտուելու իր անցեալին հետ, կապուած Հայոց ցեղասպանութեան հետ:*

*«Մեր ժամանակներուն, պէտք է որ ամբողջ աշխարհը ճանչնայ Հայ ժողովուրդի ողբերգութիւնը,*

*Շար.ը էջ 4*

## Սերժ Սարգսեանի Համաձայն՝ Մաքսային Միութեան Անդամակցելէ Ետք Եւրոպայի Հետ Համագործակցութիւնը Պիտի Շարունակուի

*Չեխիայի Հանրապետութիւն կատարած այցելութեան ընթացքին, Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան հարցազրոյց մը տուած է տեղական թերթերէն մէկուն, որու ընթացքին ան յայտարարած է որ, Մաքսային Միութեան Հայաստանի անդամակցութիւնը ոչ մէկ պարագային չի նշանակեր Եւրոպական Միութեան հետ համագործակցութեան աւարտը:*

*«Մենք արդէն վաղուց արդիւնաւէտօրէն համագործակցում ենք շատ ոլորտներում եւ մտադրուած ենք հաստատակամօրէն շարունակելու մեր յարաբերութիւնները: Ես նկատի ունեմ բարեփոխումներն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդումը, մարդու իրաւունքների պաշտպանութիւնը եւ այլն»,- ըսած է Սարգսեան:*

*«Մենք կարեւոր նշանակութիւն ենք տալիս Եւրոպական Միութեան հետ համագործակցութեանը: Վիլնիւսեան գագաթնաժողովում ընդունուած համատեղ յայտարարութեամբ (Հայաստանի Հանրապետութիւն եւ ԵՄ) մենք վերահաստատեցինք Հայաստանի պատրաստակամութիւնը հետագայում եւս զարգացնել եւ ամրապնդել համագործակցութիւնը փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող բոլոր ոլորտներում: Հենց այնտեղ՝ Վիլնիւսում, Հայաստանի արտաքին գործերի նախարարը եւ ԵՄ բարձր ներկայացուցիչը նամակներ փոխանակեցին, որոնցում նշուած է Հայաստան-Եւրամիութիւն հետագայ համագործակցութեան օրակարգը»,- աւելցուցած է Սարգսեան:*

*Պատասխանելով այն հարցին թէ, արդեօ՞ք Մաքսային Միութեան միանալու Հայաստանի որոշումը չի նշանակեր Հայաստան-ԵՄ յարաբերութիւններու օրակարգէն հրաժարում, Նախագահը ըսած է,- «Քանի որ Եւրոպական Միութեան հետ մեր փոխյարաբերութիւնները կառուցւում են*

*Շար.ը էջ 4*

## Գերմանիոյ Խորհրդարանէն Ներս Էրտողանին Կոչ Ըրած են՝ Ճանչնալ Ցեղասպանութիւնը

*Գերմանիոյ Խորհրդարանի «Քրիստոնեա-դեմոկրատական» կուսակցութեան պատգամաւոր Էրիքա Շտեյնպախ Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիպ Էրտողանին կոչ ըրած է ճանչնալ հայերու եւ ասորիներու դէմ գործադրուած ցեղասպանութիւնը եւ ներողութիւն խնդրել:*

*Պատգամաւոր Էրիքա Շտեյնպախ Խորհրդարանէն ներս դիմելով Թուրքիոյ վարչապետին ըսած է. «Կոչ կ՛ընեմ հրաժարելու աւելի 99 տարի առաջ Օսմանեան կայսրութեան Երիտթուրքական իշխանութիւններու ժամանակաշրջանին հայերու եւ ասորիներու հանդէպ կիրառուած ցեղասպանութիւնը ժխտելէն: 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհերու հարազատներէն ներողութիւն խնդրելու եւ խաղաղութեան ձեռք երկարելու ժամանակը շատոնց եկած է եւ նոյնիսկ անցած է»:*

*«Պէտք է տեսնել իրականութիւնը եւ Թրքական պատմութեան այդ ժամանակահատուածը պէտք է ներառել դասագիրքերու մէջ»,- ըսած է Էրիքա Շտեյնբախ:*

*Թուրքիոյ վարչապետը անցեալ շաբթուայ ընթացքին այցելած էր Գերմանիոյ, ուր բողոքի ցոյցերով դիմաւորուած էր բազմաթիւ շրջանակներու կողմէ:*

## Թուրքիոյ Մէջ Ազգայնականները Փորձած են Խանգարել Ցեղասպանութեան Նուիրուած Խորհրդաժողովը

*Թուրքիոյ մէջ ազգայնականութեան եւ ցեղապաշտութեան դէմ պայքարող՝ «Տուր Տէ» Նախաձեռնութեան կողմէ կազմակերպուած «Պետութիւնները ինչու ներողութիւն չեն խնդրեր» Համաժողովի ժամանակ, «Աշխատաւորական» կուսակցութեան երիտասարդ ազգայնականները մտած են սրահ եւ փորձած՝ խանգարել խորհրդաժողովը:*

*Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ Իսթանպուլի մէջ կազմակերպուած խորհրդաժողովի ժամանակ դահլիճ ներխուժած են Տողու Պերինչէքի գլխաւորած «Աշխատաւորական» կուսակցութեան երիտասարդները եւ սկսած են վանկարկել՝ «Ցեղասպանութիւնը սուտ է եւ Ամերիկայի նախագիծն է»:*

*Դահլիճ մտած ազգայնականներու դէմ խորհրդաժողովի մասնակիցները վանկարկած են «Դուրս եկէք», «Բոլորս Հրանդ ենք, բոլորս հայ ենք» կարգախօսները:*

*Ազգայնականները դահլիճէն դուրս գալէ ետք շէնքի դիմաց շարունակած են իրենց վանկարկումները:*

*Հակառակ ծագած միջադէպին, խորհրդաժողովը շարունակուած է:*

## Հայաստանի Պաշտպանութեան Նախարարը Հաստատեց Նոր Որակի Սպառազինութիւն Ձեռք Բերելու Մասին

*Հայաստանի պաշտպանութեան նախարար Նախարար Սէյրան Օհանեան յայտարարեց, որ Հայ-ատրպէյճանական սահմանի վրայ վերջին շրջանին նկատուող լարուածութիւնը, հայկական կողմին, այս պահուն որեւէ մտահոգութիւն չի պատճառեր:*

*Նախարարը Օհանեան հաստատեց, որ վերջին շրջանին լարուածութիւն կը տիրէ շփման գիծի վրայ. «Կրակոցների քանակը հինգ-վեց անգամ աւելացել էր, այդ լարուածութիւնն արտայայտւում էր կրակոցներով, ինչպէս նաեւ գիշերային պայմաններում լոյսեր վառելով, անիւներ վառելով եւ այլն: Իրավիճակը վերահսկւում է մեր կողմից: Մենք շարունակելու ենք թշնամուն պատժելու քաղաքականութիւնը»,- ըսաւ նախարարը:*



*Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան*

*Նախարարը խօսելով նոր որակի սպառազինութեան հետ կապուած հարցերու մասին ըսաւ,- «Նոր որակի սպառազինութիւն ձեռք բերել ենք եւ շարունակելու ենք համագործակցութիւնը Ռուսաստանի Դաշնութեան հետ՝ այդ ուղղութեամբ: 2010-ին Հայաստանի ու Ռուսաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնների միջեւ ստորագրուած պայմանագրի համաձայն՝ անվտանգութեան ապահովումը նոր մակարդակի է հասցուել»:*

*Ատրպէյճանի կողմէ անցեալ Յունուար 20-ի գիշերը նախաձեռնուած ներխուժման փորձէն յետոյ տիրող իրավիճակի վերաբերեալ Օհանեան ըսաւ,-«Մեր հարեւանները մտավախութիւն ունէին, որ այդ միջադէպից յետոյ պատասխան կը ստանան՝ չգիտակցելով, որ զոհուած Արմէն Յովհաննիսեանը ու միւս զինծառայողները արդէն արժանի պատասխան տուել էին նրանց»: Ան միաժամանակ նշեց, որ անհանգստանալու պատճառներ չկան. «Նման դէպքերում անհրաժեշտութեան դէպքում այլ բան չի մնում անելու, քան պատասխան տալը: Մենք շարունակում ենք այդ քաղաքականութիւնը», աւելցուց պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ինքնիշխանութեան կորուստ՝ առանձնակի դաժանութեամբ

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

*Նախօրէին Հայաստանի էկոնոմիկայի փոխնախարար Գարեգին Մելքոնեանը սենսացիոն յայտարարութիւն է արել. նա ասել է, որ այսուհետ Եւրամիութեան հետ բանակցութիւնները Հայաստանի անունից վարելու է Մաքսային միութիւնը:*

*Սա փաստացի նշանակում է, որ Հայաստանն այլեւս միջազգային յարաբերութիւնների ինքնուրոյն սուբիեկտ չէ՝ աւելին՝ հասկանալի է, որ Եւրամիութիւնը Հայաստանի հարցով Մաքսային միութեան (այսինքն՝ Ռուսաստանի) հետ չի բանակցի. ի՞նչ իմաստ ունի պարի հրաւիրել օրիորդին, եթէ նախապէս յայտնի է, որ մի քանի ջիգիթներ անմիջապէս վեր են ցատկելու:*

*Սերժ Սարգսեանն, ի դէպ, Պրահայում յայտարարեց, թէ Եւրասիական միութեանը Հայաստանի անդամակցումը բխում է մեր ազգային շահերից: Բայց՝ հարկ չհամարեց բացատրել, թէ ինչո՞ւ Հայաստանի դէպքում «ազգային շահ» ասուածը երկու հիմնական բաղադրիչ ունի՝ տնտեսական ու ռազմաքաղաքական: Հիմա արդէն հասկանալի է, որ տնտեսական առումով Մաքսային միութեանն անդամակցելը Հայաստանին ոչ մի օգուտ չի տալու, աւելին՝ կարգին վնասելու է: Ընդ որում՝ թղթի վրայ տնտեսութիւնը կարող է նոյնիսկ մէկ-երկու տոկոսով աճել (համատարած թանկացումների հաշուին), բայց որ բնակչութեան կենսամակարդակը կտրուկ իջնելու է՝ դա հաստատ: Նոյնիսկ յստակ հաշուարկներ կան, թէ մօտաւորապէս քանի տոկոսով է թանկանալու կեանքը, եւ պատկերը, հաւատացէք, մխիթարական չէ: Իսկ գուցէ ռազմաքաղաքակա՞ն առումով է Մաքսային միութիւնը ձեռնտու Հայաստանին: Պարզւում է՝ նման բան նոյնպէս չկայ: Հայաստանը վաղուց ՀԱՊԿ անդամ է, եւ Ռուսաստանն այսպէս թէ այնպէս որոշակի պարտաւորութիւններ ունի Հայաստանի նկատմամբ՝ արտաքին ագրեսիայից պաշտպանելու հարցում: Իսկ ահա Ղարաբաղի վրայ այդ պարտաւորութիւնները չեն տարածւում: Աւելին՝ Ռուսաստանը յարձակողական զէնք է վաճառում Ատրպէյճանին ու հետն էլ յայտարարում, որ կը միջամտի միայն այն դէպքում, եթէ Ատրպէյճանը յարձակուի ոչ թէ Ղարաբաղի, այլ Հայաստանի վրայ: Այլ կերպ ասած՝ Մաքսային միութեանն անդամակցելը ոչ մի օգուտ չի տալիս Հայաստանին ոչ տնտեսական, ոչ ռազմաքաղաքական առումով:*

*Բայց նոյնիսկ սա՛ մի կողմ թողնենք: Ենթադրենք՝ Մաքսային միութեանն անդամակցելը Հայաստանին լաւ էլ օգուտ է, պարզապէս «մեր վրայ խաբար չկայ»: Այդպէս էլ է պատահում: Բայց ինչո՞ւ է Ռուսաստանը մինչեւ «վերջին խազը» Հայաստանին զրկում ինքնիշխանութիւնից: Կարող էր, չէ՞, Հայաստանի անունից բանակցելու փոխարէն հարցն այսպէս դնել՝ «դուք ինքնիշխան պետութիւն էք, գնացէք ինքներդ բանակցէք Եւրամիութեան հետ, բայց հաշուի առէք նաեւ մեր շահերը»: Կամ էլ, եթէ Ռուսաստանը որոշել է մեր անունից բանակցել Եւրամիութեան հետ, մեզ էլ պիտի հնարաւորութիւն տրուի, ասենք, Ռուսաստանի անունից բանակցել Ադրբեջանի հետ՝ զէնքի մատակարարումների առումով: Ատրպէյճանն ուզում է Ռուսաստանից զէնք գնել՝ թող այդ հարցով Հայաստանի հետ բանակցի: Բայց Սերժ Սարգսեանը Պրահայում վիզը ծռում է ու խեղճ-խեղճ բացատրում՝ մենք չենք կարող Ռուսաստանից պահանջել, որ Ադրբեջանին զէնք չմատակարարի:*

*Մի խօսքով՝ խնդիրը հետեւեալն է. Հայաստանի վրայ ճնշումներ կային ե՛ւ Արեւմուտքից, ե՛ւ Ռուսաստանից, Հայաստանն էլ, ցաւօք, այնպիսի աշխարհաքաղաքական իրավիճակում է, որ չէր կարող երկուսին էլ «պասլատ անել» ու ստիպուած էր ընտրութիւն կատարել՝ կամ այս կողմ, կամ այն կողմ: Այլ հարց է, որ Հայաստանը կարո՞ղ էր միանալ ճամբարներից մէկին՝ պահպանելով ինքնիշխանութիւնը: Բայց քանի որ Սերժ Սարգսեանը տարիներ շարունակ «խաղեր է տուել» ու կորցրել վստահութիւնը ե՛ւ Արեւմուտքում, ե՛ւ Ռուսաստանում՝ ռուսները որոշեցին Հայաստանին զրկել հետագայում եւս «խաղեր տալու» հնարաւորութիւնից (կարելի է չկասկածել՝ նոյնն էլ Արեւմուտքն էր անելու): Ինչո՞ւ Հայաստանին թոյլ չեն տալիս ինքնուրոյն բանակցութիւններ վարել Եւրամիութեան հետ: Որովհետեւ այս իշխանութիւններին «չատ չկայ». մէկ էլ տեսար՝ մտքափոխուեցին: Ընդ որում՝ մեծ է հաւանականութիւնը, որ որոշ ժամանակ անց Ղարաբաղի հարցով նոյնպէս Մաքսային միութիւնն է բանակցելու Հայաստանի անունից. եթէ Եւրամիութեան դէպքում կարելի է, ինչո՞ւ Ղարաբաղի դէպքում չի կարելի՝ Դաշնակիցների հետ, համաձայնուէք, այդպէս չեն վարւում: Այդպէս վարւում են կամ պոտենցիալ դաւաճանների հետ, կամ անմեղսունակների: «Իւրային համարում են, բայց զէնք չեն վստահում. աւելին՝ միշտ հսկողութեան տակ են պահում ու ամէն առիթով նուաստացնում: Եւ կապ չունի, թէ որ ճամբարի մասին է խօսքը: Այդպէս վարւում են միշտ եւ բոլորը:*

*Սերժ Սարգսեանին դրսում նուաստացնելն, ի դէպ, միանգամայն օրինաչափ է: Եթէ նա սեփական ժողովրդին նուաստացնում է, որովհետեւ աւելի «ուժեղ» է, ուրեմն պիտի պատրաստ լինի, որ իրենից ուժեղներն էլ դրսում իրեն են նուաստացնելու: Ժողովրդի դէպքում փոքր-ինչ այլ է. եթէ մենք մեր երկրում այս նուաստացումները չհանդուրժենք, դրսում ոչ մէկը մեր պետութեանը չի նուաստացնի:*

*«ՋՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*

# Երեք շանս եւ երեք հրաժարական

*ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԵԱՆ*

*1998 թ. Փետրուարի 3-ին Լեւոն Տէր-Պետրոսեանը հրաժարական տուեց նախագահի պաշտօնից: Սա Հայաստանի անկախ հանրապետութեան պատմութեան ընթացքում քաղաքական առաջին ու առայժմ վերջին հրաժարականն է: Լեւոն Տէր-Պետրոսեանը հրաժարական տուեց «յայտնի ուժերի պահանջով, ղարաբաղեան կարգաւորման քաղաքականութեան եւ «պետական հիմնարար խնդիրների» համատեքստում: Մինչ այդ, նա գրել էր իր յայտնի՝ «Պատերազմ, թէ խաղաղութիւն» յօդուածը, որում շարադրել էր սեփական հայեցքը Ղարաբաղի եւ ընդհանրապէս քաղաքական խնդիրների առնչութեամբ:*

*Տէր-Պետրոսեանը մնում է միակ ընտրուած նախագահը, 1991 թուականին: 1995-ի խորհրդարանի եւ 1996-ի նախագահի ընտրութիւններն անցան կեղծիքով ու բռնութիւններով, որի հետեւանքը «յայտնի ուժերի» աշխուժացումն էր ներքաղաքական կեանքում: Մինչ այդ էլ, այդ ուժերը «պատերազմի իրաւունքով» ներքին կեանքում հասել էին զգալի դիրքերի, եւ Տէր-Պետրոսեանի հրաժարականից յետոյ նրանք «լեգիտիմացրին» իրենց քաղաքական հաւակնութիւններն ու պահանջները:*

*Տէր-Պետրոսեանի հրաժարականից յետոյ յայտնի ուժերը Հայաստանում ստեղծեցին ռազմական օլիգարխիայի իշխանութիւնը: 1999-ից յետոյ, ռազմական օլիգարխիան ոչնչացուեց, փոխարէնը ստեղծուեց քրէա-օլիգարխիայի իշխանական համակարգը, որը գոյատեւում է մինչ օրս: Նախ ռազմական օլիգարխիան, ապա քրէական օլիգարխիան Հայաստանում ոչնչացրեցին իշխանութեան ձեւաւորման սահմանադրական մեխանիզմները, ու գուլպացրեցին քաղաքական ու տնտեսական համակարգերը, հաստատելով քուոտաների ու ռեկետի անօրինական համակարգ, հանրային կեանքը հանգեցնելով քրէական պայմանաւորուածութիւններին, որոնք փոխարինում էին Սահմանադրութեանը:*

*Կարո՞ղ էր արդեօք Տէր-Պետրոսեանը տեղի չտալ «յայտնի ուժերին»: Բացի «յայտնի ուժերից», եղե՞լ է արդեօք նաեւ միջազգային ճնշում եւ պահանջ: Շատերն են հարցնո՞ւմ իսկ ի՞նչ կը լինէր, եթէ Տէր-Պետրոսեանը հրամանագիր ստորագրէր «յայտնի ուժերին» ազատելու մասին, եւ ձեռնամուխ լինէր երկրում իրական բարեփոխումներին, 1996-ի իրադարձութիւններից յետոյ: «Յայտնի ուժերը» կը համարձակուի՞ն հակաքայլեր անել: Այս հարցերին դժուար է պատասխանել, թերեւս դրանց սպառիչ կարող է պատասխանել միայն Տէր-Պետրոսեանը:*

*2007-ին Տէր-Պետրոսեանը վերադարձաւ մեծ քաղաքականութիւն եւ հզօր շարժում բարձրացրեց: Տէր-Պետրոսեանի ներքին կեանքին ու խնդիրներին վերաբերող ելոյթներում յստակ ախտորոշւում էր ստեղծուած իրավիճակը եւ ձեւակերպւում էին խնդիրները: Տէր-Պետրոսեանին յաջողուեց գործի դնել քրէա-օլիգարխիկ համակարգի ապամոնտաժման միակ մեխանիզմը՝ որակապէս այլ բեւեռի ձեւաւորումը: Իշխանութիւնը պատասխանեց մարտի 1-ով, ինչը սակայն քայքայման եզրին հասցրեց քրէա-օլիգարխիկ համակարգը: Թւում էր, մնացել էր մէկ քայլ, մէկ իրական քայլ, որից յետոյ, շարժման ալիքի ու էներգետիկայի շնորհիւ հնարաւոր կը լինէր հաստատել իշխանութեան ձեւաւորման սահմանադրական մեխանիզմները:*

*Տէր-Պետրոսեանին շատերն են մեղադրում «մութ ու ցուրտ» ժամանակների համար: Սակայն, նրա գլխաւոր խնդիրը թերեւս այն էր, որ նա երկու անգամ՝ 1990-ականների սկզբին եւ 2008-ին բաց թողեց ամենակարեւորը՝ շարժման ալիքի վրայ հանրային մտածողութեան, արժէքների ու յարաբերութիւնների ռեֆորմացիայի հնարաւորութիւնը: Խնդիրը ոչ թէ մութն ու ցուրտն էր, այլ այս հնարաւորութիւնը, որն իրագործելու դէպքում մենք կ՚ունենայինք որակապէս այլ հանրութիւն, ինչը յեղափոխական փոփոխութիւնների, հանրային կեանքի ռեֆորմացիայի անհրաժեշտ պայմանն է:*

*Տէր-Պետրոսեանը երջանիկ նախագահ էր՝ յաղթանակների, անկախութեան հաստատման ժամանակաշրջանի նախագահը: Բացի այդ, նրան բախտ վիճակուեց ղեկավարել երկու հզօր շարժում, ինչը հազուագիւտ երեւոյթ է քաղաքականութեան մէջ: Սա, անշուշտ, խօսում է նրա անձնական, քաղաքական եւ այլ որակների մասին:*

*Սակայն, ամենավճռական պահերին Լեւոն Տէր-Պետրոսեանը գերադասում էր հրաժարականը: Նա հրաժարական տուեց 1998-ին, հրաժարական տուեց 2008-ին, երբ սկսեց «քաղաքականութիւն անել» քրէա-օլիգարխիկ համակարգի հետ, եւ վերջապէս, հրաժարական տուեց 2013-ի Դեկտեմբերին իր յայտնի ելոյթով, երբ նա անկախութեան խորհրդանիշը, ինքնիշխանութեան համար պայքարողներին անուանեց մարգինալներ:*

*«ԼՐԱԳԻՐ»*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Փորձագէտ. «Հայաստանը Կը Կորցնի Ինքնուրոյն Տնտեսական Քաղաքականութիւն Վարելու Իրաւունքը»



Փորձագէտ Յովհաննէս Իգիթեան

Կեանքի կոչելով Մաքսային Միութեան «ճանապարհային քարտէզը» եւ դառնալով այդ միութեան անդամ, Հայաստանը զրկւում է այլ պետութիւնների հետ ինքնուրոյն տնտեսական քաղաքականութիւն վարելու իրաւունքից ու հնարաւորութիւնից:

«Ազատութեան» հետ զրոյցում նման գնահատական տուեց Բրիւսելում գործող Եւրոպական գործարար ընկերակցութեան (European Business Association) փորձագէտ Յովհաննէս Իգիթեանը:

Իգիթեանը յիշեցրեց, որ Մաքսային Միութիւնում վերջնական որոշումը կայացնում է Եւրասիական տնտեսական յանձնաժողովը, որի որոշումները պարտադիր են միութեան անդամ պետութիւնների համար:

«Մաքսային Միութեան անդամ դառնալուց յետոյ Հայաստանի իշխանութիւնների փոխարէն այդ յանձնաժողովը կ՚որոշի մեր մաքսատուրքերի չափը, հետեւաբար՝ թէ ինչ տնտեսական քաղաքականութիւն է լինելու Հայաստանում», - փոխանցեց փորձագէտը:

Համաձայնելով դիտարկմանը, որ Հայաստանը չի կարողանայ տնտեսական պայմանագրեր ստորագրել այլ երկրների հետ մինչեւ Մաքսային Միութեան գործադիր կոմիտէն հաւանութիւն չտայ տնտեսական պայմանագրերին՝ Իգիթեանը յաւելեց. - «Ես նոյնիսկ կ՚ասէի, որ Հայաստանին որեւէ երկիր լուրջ չի ընդունի, որովհետեւ արդէն բոլորը գիտեն, որ Հայաստանը զրկուած է այդ հնարաւորութիւնից: Նրանք [այդ երկրները] ուղղակի հաշուի կ՚առնեն այն մաքսատուրքերը, որոնք նշանակուած են այդ յանձնաժողովի կողմից եւ Հայաստանի հետ կը վարեն այդ մաքսատուրքերից բխող քաղաքականութիւն»:

Յովհաննէս Իգիթեանի համոզմամբ, աշխարհում Հայաստանը կը դադարի ընկալուել որպէս ինքնուրոյն տնտեսական սուբիեկտ նաեւ այն պատճառով, որ ձգտելով կարճ ժամանակահատուածում դառնալ Մաքսային Միութեան անդամ՝ մեր երկիրը պէտք է հաշուած ամիսների ընթացքում հրաժարուի այլ երկրների ու միջազգային կազմակերպութիւնների հետ ձեռք բերուած այն պայմանաւորուածութիւնների, որոնք հակասում են Մաքսային Միութեան պահանջներին:

«Այս ամէնը կը հանգեցի նրան, որ միջազգային մի շարք կարեւոր ֆինանսատնտեսական կառոյցներ ու երկրներ կը փոխեն իրենց դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ», - եզրափակեց Իգիթեանը:

«Բայց Մաքսային Միութիւնը բացառութիւն չէ», - հակադարձեց Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բիւջետային հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ, Գագիկ Մինասեանը (ՀՀԿ):

«Ազատութեան» հետ զրոյցում Մինասեանը շարունակեց, թէ «աշխարհում գործող այլ մաքսային միութիւններում նոյնպէս նման իրավիճակ է». - «Օրինակ, Եւրամիութիւնում, հիւսիսամերիկեան՝ NAFTA միութիւնում: Այդ բոլոր միութիւններում անդամ պետութիւնները այլեւս չեն որոշում խաղի կանոնները, նրանց փոխարէն այդ գործն անում են կենտրոնական մարմինները»:

# Ընդդիմութիւնը Ակցիաներ է Նախատեսում Փետրուարի 18-ին Եւ Մարտի 1-ին

Նախագահական ընտրութիւններից ուղիղ մէկ տարի անց՝ փետրուարի 18-ին, Հայաստանի նախագահի նախկին թեկնածու, «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը մտադիր է ուղերձով հանդէս գալ՝ դիմելով ժողովրդին:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փոխանցեց «Ժառանգութեան» խօսնակ Յովսէփ Խուրշուդեանը, օրուայ ընտրութիւնը յատուկ է արուել: «Մէկ տարի առաջ հէնց այս օրը մենք միասին ազգովի յաղթեցինք, ըստ էութեան, ընտրութիւնների ժամանակ, ժողովուրդը վերցրեց իշխանութիւնը, չկարողացաւ, ցաւօք սրտի, ամրագրել այն, քանի որ բռնազաւթուեց իշխանութիւնը գործող իշխանութիւնների կողմից», - ասաց Խուրշուդեանը:

«Ժառանգութիւն»-ը արդէն իրազեկել է Երեւանի քաղաքապետարանին, որ փետրուարի 18-ին հանրահաւաք է անցկացնելու Ազատութեան հրապարակում, սակայն, ինչպէս տեղեկացրեց կուսակցութեան խօսնակը, այս որոշումը դեռ վերջնական չէ. - «Դեռ չի յայտարարուել, որ հէնց հանրահաւաք է լինելու: Այն, որ միջոցառում է լինելու, եւ Րաֆֆի Յովհաննիսեանը ուղերձով դիմելու է հանրութեանը, մենք ասել ենք, բայց թէ ինչ ձեւաչափով դա կը լինի՝ հանրահաւաքի, թէ դահլիճային հանդիպման տեսքով, դեռ որոշուած չէ: Յամենայն դէպս, այո, մենք վերցրել ենք Ազատութեան հրապարակը այդ օրուայ համար, որ եթէ որոշուի հանրահաւաք՝ ուշ չլինի արդէն դիմելու համար»:

2013 թուականի նախագահական ընտրութիւններում պաշտօնական տուեալներով շուրջ 540 հազար ձայն կամ ընտրողների մօտ 37 տոկոսի վստահութիւնը ստացած թեկնածուն վերջին անգամ հանրահաւաք էր հրաւիրել անցած տարուայ Սեպտեմբերին՝ չբացառելով, որ կոչտացնելու է պայքարի միջոցները:

Ի դէպ, Երեւանի քաղաքապետարանից հաստատեցին, որ ի գիտութիւն են ընդունել նաեւ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) իրազեկումը՝ մարտի 1-ին Ազատութեան հրապարակում հանրահաւաք, ապա նաեւ Երեւանի կենտրոնում երթ անցկացնելու վերաբերեալ:

Կոնգրէսում, սակայն, վաղաժամ են համարում տեղեկացնել՝ սպասուո՞ւմ է արդեօք հանրահաւաքում առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը:

Յիշեցնենք՝ վերջին անգամ կոնգրէսը հանրահաւաք էր հրաւիրել անցած տարի գարնանը՝ Երեւանի աւագանու ընտրութիւններին ընդառաջ:

# Ազգային Ժողովը Մերժեց Գազային Յանձնաժողով Ստեղծելու Առաջարկը



Հայաստանի Ազգային Ժողովի նիստերու դահլիճը՝ նիստերէն մէկուն ընթացքին

Հայաստանի Իշխանական կոալիցիան մերժեց գազային պայմանագրերի հարցով խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողով ստեղծելու՝ ոչ իշխանական չորս խմբակցութիւնների նախաձեռնութիւնը:

«Կողմ՝ 44, դէմ՝ 58, ձեռնպահ՝ 3: Որոշումը չի ընդունուել», - քուէարկութեան արդիւնքները հրապարակեց ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանը:

Նախաձեռնութեան հեղինակները յայտարարեցին, որ Հանրապետականն իր քուէարկութեամբ ապացուցեց, որ թաքցնում է յանցաւոր գործարք:

Խորհրդարանական ոչ իշխանական ուժերը՝ «Բարգաւաճ Հայաստան»-ը, «Ժառանգութիւն»-ը, ՀԱԿ-ը եւ ՀՅԴ-ն, ուզում էին առաջարկուող յանձնաժողովի միջոցով ստանալ հետեւեալ հարցերի պատասխանները. 2011-ից ինչպէ՞ս է գոյացել 300 մլն դոլար պետական պարտքը, որի դիմաց ռուսական կողմին է փոխանցուել «Հայռուսգազարդ»-ում Հայաստանի կառավարութեան ունեցած վերջին 20 տոկոս բաժնեմասը, ինչո՞ւ Հայաստանի սահմանին 159 դոլար արժեցող գազը բնակչութեանը 110 տոկոսով աւելի թանկ՝ 380-ով հասնում, ինչո՞ւ կառավարութիւնը երաշխաւորեց, որ մինչեւ 2044 թուականը ռուսական գազ է գնելու միայն «Գազպրոմ»-ից:

«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը յայտարարեց. - «Հիմնական հարցադրումները, թէ ինչպէս են գոյացել 300 մլն դոլարի պարտքը եւ ինչպէս է գոյացել սակագինը 380 դոլարին համարժէք դրամով, պատասխան չստացան: Դէմ քուէարկելով այս նախագծին՝ մենք ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն պատասխանատուութիւն ենք վերցնում թաքցնել այս մութ գործարքը»:

Իշխող ՀՀԿ-ի խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը հակադարձեց. - «Հիմնականում զազրախօսութիւն, յանցանքի մէջ մեղադրանքներ: Առաւել եւս՝ հիմա էլ սկսել են մեր փոխարէն մտածել: Մենք գիտենք ինչ ենք անում, մենք մեր պատասխանատուութեան տէրն ենք: Այն բոլոր խնդիրները, որ հասարակութեան մէջ կ՚առաջանան, մենք պարտաւոր ենք եւ կը պատասխանենք»:

Ջնայած հերթական նախաձեռնութեան տապալմանը՝ խորհրդանական ոչ իշխանական ուժերը «Ազատութեան» հետ զրոյցներում ասում էին, որ շարունակելու են խորհրդարանում բարձրացնել հասարակական մեծ հնչեղութիւն ունեցող հարցերը:

# Հայաստանի Ընդդիմութիւնը Իշխանութեան Մեղադրում Է Սահմանադրական Դատարանին Անուղղակի Կաշառելու Մէջ

Հայաստանի Սահմանադրական դատարանի անդամներն արժանի չեն անգամ աշխատավարձ ստանալու, էլ չասած կենսաթոշակների մասին: Այդ մասին Ազգային Ժողովի նիստում յայտարարել է «Հայ ազգային» կոնգրէս» խմբակցութեան պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը՝ մեկնաբանելով «Սոցիալական երաշխիքների» օրինագիծը եւ «Սահմանադրական դատարանի մասին» օրէնքում փոփոխութիւններ անելու նախագիծը:

Փոփոխութիւնները ենթադրում են Սահմանադրական դատարանի անդամների մասնագիտական ստաժի համար համաթուերի աւելացում: Ներկայացուած օրինագծերից ՍԴ անդամների ապագայ թոշակների մեծութիւնը պարզելն անհնար է. Մատնանշուած չեն ենթադրեալ յատկացումները ստաժի տարիների համար: Իր ելոյթում Փաշինեանը նշեց 450 հազար դրամ թիւը, ինչին աշխատանքի նախարար Արտեմ Ասատրեանը ոչ «այո» պատասխանեց, ոչ՝ «ոչ»:

«Անհասկանալի է, թէ աղքատութեան նման ցուցանիշներով երկրում, ինչպիսին Հայաստանն է, կառավարութիւնը ցանկանում է նման թոշակներ նշանակել Գագիկ Յարութիւնեանին եւ նրա ենթականերին»,- ասել է Փաշինեանը: Նա ակնարկել է, որ նման օրինագծերը կարող են անուղղակի կաշառք հանդիսանալ, որով կառավարութիւնը ակնկալում է պարտադիր կենսաթոշակային դէմ հայցի մերժում ՍԴ-ի կողմից:

«Ինչպէս երեւում է, մեր դիմումները ՍԴ միայն նպաստում են Գագիկ Յարութիւնեանի եւ նրա թիմի մասնագիտական աճին»,- արձանագրեց Փաշինեանը:

# ԼՈՒՐԵՐ

## ԱՄՆ Դեսպան.- «Շատ Ոգեւորուած Ենք Պայմանագրի Կնքմամբ»

«Էներգետիկ անկախութիւնը շատ կարեւոր է Հայաստանի համար», - լրագրողների հետ հանդիպմանն յայտարարեց ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը՝ անդրադառնալով օրերս Հայաստանի կառավարութեան եւ ամերիկեան Contour Global ընկերութեան միջեւ՝ Որոտանի համալիրի առքուվաճառքի մասին կնքուած պայմանագրին:



ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերն

Յունուարի 29-ին կնքուած պայմանագրի համաձայն, ամերիկեան ընկերութիւնը 180 միլիոն դոլար է վճարելու Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի համար եւ առաջիկայ վեց տարում եւս 70 միլիոն կը ներդնի համալիրի արդիականացման եւ վերանորոգման համար:

«Շատ ոգեւորուած ենք պայմանագրի կնքմամբ: Այս ներդրումը Միացեալ Նահանգների կողմից Հայաստանում երբեւ կատարուած ամենամեծ ներդրումն է. 180-250 միլիոն դոլար՝ կախուած այն հանգամանքից, թէ ինչպէս կը հաշուարկէք: Եւ մեր առաջնահերթութիւններից է Հայաստանի հետ առաւել ամուր առեւտրային ու ներդրումային կապերի ձեւաւորումը, եւ այս գործարքը դրա լաւագոյն օրինակն է: Մենք ոգեւորուած ենք նաեւ այն պատճառով, որ սա ամերիկեան առաջին ներդրումն է Հայաստանի էներգետիկ ոլորտում: Սա շատ կարեւոր է, որովհետեւ իւրաքանչիւր երկրի համար անհրաժեշտ է էներգետիկ դիւերսիֆիկացիա եւ էներգետիկ անկախութեան: Սա շատ կարեւոր է թէ՛ Հայաստանի, թէ՛ Միացեալ Նահանգների համար», - ասաց դեսպանը:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի էներգետիկ համակարգի գերակշիռ մասը այսօր գտնւում է ռուսական կապիտալի վերահսկողութեան ներքոյ: Վերջերս կայացած «ՀայՌուսգազարդ»-ի սկանդալային գործարքից յետոյ ռուսական «Գազպրոմ»-ը դարձաւ Հայաստանի ողջ գազային համակարգի միակ սեփականատէրը: «Գազպրոմ»-ին է պատկանում նաեւ Հրազդանի ՋէԿ-ի 5-րդ էներգաբլոկը: Ռուսական «Ինտեր ՌԱՕ ԵէՍ» ընկերութեանն է պատկանում Սեւան-Հրազդան հիդրոէլեկտրակաեանների համալիրը եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, որը Հայաստանի էլեկտրաբաշխիչ ցանցերի սեփականատէրն է:

Էներգետիկ հարցերով ՄԱԿ-ի ազգային փորձագէտ Արա Մարջանեանն ասում է, որ Որոտանի պայմանագրով ու ամերիկեան կապիտալի ներհոսքով՝ «այժմ Հայաստանի էներգետիկ ոլորտում իրադրութիւնը փոքր-ինչ կը հաւասարակշռուի, եւ սա ճանապարհ է դէպի հայաստանեան էներգետիկ ոլորտի դիւերսիֆիկացման, ինչը բխում է մեր երկրի շահերից»:

## Հայաստանում Աւելանում Են Ամուսնալուծութիւնները

Ամուսնալուծութիւնների թուի աճը բացառապէս Հայաստանին բնութագրական միտում չէ, այն բնորոշ է նաեւ համաշխարհային միտումներին: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց ԵՊՀ դասախօս, սոցիոլոգ Ժաննա Անդրէասեանը՝ մեկնաբանելով ԱՎԾ-ի հրապարակած վերջին տուեալները, որոնց համաձայն, 2012թ. համեմատ՝ 2013թ. Հայաստանում 15,6 տոկոսով աճել է ամուսնալուծութիւնների թիւը:

«Գնալով աճում է ամուսնալուծութիւնների թիւը յատկապէս մինչեւ 1 եւ 1-4 տարուայ զոյգերի մօտ, որոնք դեռ նոր են կայանում որպէս ընտանիք»,-ասաց Ժաննա Անդրէասեանը՝ նկատելով, որ վերջին 10 տարիների ընթացքում որոշակիօրէն աւելացել են նաեւ ամուսնալուծութիւնները 20 եւ աւելի տարիներ համատեղ ապրած զոյգերի շրջանում:

Նրա խօսքով՝ այս փուլում շատ կարեւոր են նոր կազմաւորուած ընտանիքի յարաբերութիւնները մերձաւոր հարազատների հետ, որոնք կարող են վճռորոշ լինել. «Կարեւոր է ընտանիքի կայացման սոցիալ-տնտեսական հիմքը, որը նոյնպէս լուրջ փորձութիւն է, ինչպէս նաեւ երեխայի ծնունդը, որը ընտանիքի կայացման շատ կարեւոր գործօն է»:

Սոցիոլոգի խօսքով՝ երկարամեայ ընտանիքների բաժանութեան դէպքում կարելի է խօսել որակապէս այլ ամուսնալուծութեան մասին, երբ հիմնական խնդիրները, որոնք դրուած են ընտանիքի կազմաւորման եւ գոյութեան առաջին փուլերում, լուծուած են:

«Մարդիկ հնարաւորութիւն ունեն յետադարձ հայեացք գցել իրենց անցած կեանքին եւ նորովի իմաստաւորել, վերագնահատել այն՝ որոշելով նաեւ նոր կեանք սկսել, եւ այս դէպքում ամուսնալուծութիւնը սովորաբար շատ աւելի երկարատեւ մտածուած ու գիտակցուած որոշման արդիւնք է»,-ասաց սոցիոլոգը՝ ուշադրութիւն հրաւիրելով այն փաստին, որ այս ամուսնալուծութիւնների մասնաբաժինը ընդհանուր ամուսնալուծութիւնների թուի մէջ 2012թ. տուեալներով շուրջ 30 տոկոս է:

Անդրէասեանի խօսքով՝ ամուսնալուծութիւնների թիւն ընդհանրապէս աւելի բարձր է այն ընտանիքներում, որտեղ երեխաներ չկան:

«Այսինքն ինչ-որ առումով երեխաների գործօնը՝ իբրեւ ընտանիքը պահող ուժ, շարունակում է մնալ, չնայած պէտք է նշել, որ այժմ Հայաստանում մեծ թիւ են կազմում այն ընտանիքները, որոնք երեխաների առկայութեամբ ամուսինների արհեստական համատեղ գոյակցութիւն են ներկայացնում, այսինքն ինչ-որ առումով արհեստական ընտանիքներ են, որտեղ միակ կապողը երեխաներն են»,-ասաց Անդրէասեանը:

Յիշեցնենք, որ ԱՎԾ տուեալներով՝ 2013թ. Հայաստանում գրանցուել է 3756 ամուսնալուծութիւն՝ 2012թ. գրանցուած 3250-ի դիմաց:

## Ոստիկանութեան Գնդապետը Կասկածւում Է Պետական Դաւաճանութեան Մէջ

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) կողմից իրականացուած օպերատիւ-հետախուզական միջոցառումների արդիւնքում Յունուարի 31-ին ձերբակալուել է Հայաստանի ոստիկանութեան նախկին աշխատակից, ոստիկանութեան գնդապետ, Երեւանի բնակիչ 61-ամեայ Խաչիկ Մարտիրոսեանը:

«Ազգային Անվտանգութեան Ծառայութեան կողմից ձեռք են բերուել անհերքելի ապացոյցներ, որոնք վկայում են, որ Խաչիկ Մարտիրոսեանը, ֆինանսական օժանդակութիւն ստանալու ակնկալիքով, 2013 թուականի Օգոստոսին սեփական նախաձեռնութեամբ դիմել է Վրաստանում Ադրբեջանի դեսպանութիւն ու կապ է հաստատել դեսպանութեան քողի տակ գործող ադրբեջանական յատուկ ծառայութիւնների աշխատակիցների հետ, առաջարկելով իր ծառայութիւնները», - ասուած է ԱԱԾ-ի մամուլի կենտրոնի հաղորդագրութիւնում:

«Խաչիկ Մարտիրոսեանը Ադրբեջանի յատուկ ծառայութիւններից ստացել է ռազմական բնոյթի տեղեկութիւններ ձեռք բերելու առաջադրանքներ եւ դրանք կատարելու նպատակով ձեռնարկել է գործուն քայլեր: Իր կողմից ձեռք բերուած տեղեկութիւնները Խաչիկ Մարտիրոսեանը մտադրուած է եղել փոխանցել ադրբեջանցիներին, ինչը սակայն, կասեցուել է ՀՀ ԱԱԾ-ի մարմինների կողմից», - փոխանցում է ԱԱԾ-ի մամուլի կենտրոնը:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան քննչական վարչութիւնում Մարտիրոսեանի նկատմամբ յարուցուել է քրէական գործ Քրէական օրէնսգրքի 299-րդ յօդուածի («Պետական դաւաճանութիւնը») 1-ին մասի յատկանիշներով, կատարւում է նախաքննութիւն:

Մեղաւոր ճանաչուելու դէպքում ոստիկանութեան գնդապետին սպառնում է 10-ից մինչեւ 15 տարուայ ազատազրկում:

## «Ամէն Ինչ Անելու Ենք, Որ Սիրիահայերը Հայաստանից Էլ Չարտագաղթեն»

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի խորհրդական Ջինաւոր Մեղրեանն ներկայացրեց Փաստաբանների պալատի «Սիրիահայերին իրաւական օգնութեան փաստաբանական ծրագիրը»՝ վստահեցնելով, որ իրենք էլ իրենց կողմից ամէն ինչ կ՛անեն, որ այդ մարդիկ Հայաստանից եւս չարտագաղթեն:

«Ծրագիրը նպատակ է հետապնդում սիրիահայ գաղթականներին տրամադրել անվճար իրաւաբանական խորհրդատուութիւն»,-ասաց նա՝ մանրամասնելով, որ ծրագիրը բաղկացած է երկու փուլից: Առաջին փուլով՝ ՀՀ փաստաբանների պալատում տրամադրուելու է անվճար իրաւաբանական խորհրդատուութիւն՝ սիրիահայերի իրաւագիտակցութեան բարձրացման նպատակով:

Ծրագրի երկրորդ փուլով նախատեսւում է ամփոփել սիրիահայերին յուզող հարցերի շրջանակը, որոնք առնչւում են ՀՀ օրէնսդրութեանը, պատրաստել երկլեզու՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն ձեռնարկ եւ այն անվճար տարածել սիրիահայերի շրջանում:

«Արդէն առիթ ունեցել ենք հանդիպել սիրիահայ 30 ընտանիքների հետ: Որոշակի աշխատանք արդէն իսկ կատարուած է, մնացածն արդէն կամաց-կամաց կ՛իրագործուի: Եւ իրաւական օգնութիւնը, եւ այդ ձեռնարկը տրուելու են անվճար»,-ասաց նա:

Վերջինիս խօսքով՝ սիրիահայերի կողմից բարձրացուած հարցերի շրջանակը շատ լայն է. «Վստահ եմ, որ այս խորհրդատուութեան հետեւանքով այն աւելի կ՛ընդլայնուի»,-ասաց նա եւ աւելացրեց, որ Պալատի նախաձեռնութիւնը բաւականին դրական եւ ակտուալ է եւ կը նպաստի Պալատի նկատմամբ վստահութեան աւելացմանը:

## Օճալանի Նամակը Ուղղուած Է Թուրքերուն

*Շարունակուած էջ 1-էն*

ճամբայ բանալով սգալու անոնց ցաւը: Անխուսափելի է որ, Թրքական Հանրապետութիւնը այս հարցին մօտենայ չափահասօրէն եւ հաշտուի ցաւալի պատմութեան հետ»,- ըսած է Օճալան իր նամակին մէջ:

Մեկնաբանելով Օճալանի այս նամակը, Թրքական հարցերու մասնագէտ Սարգիս Հացպանեան, Երեւանի մէջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ նամակի բովանդակութիւնը ուղղուած է Թրքական իշխանութիւններուն, քան թէ հայութեան:

Հացպանեանի համաձայն, Օճալան չուզեր խանգարել իր յարաբերութիւնները Թրքական յատուկ սպասարկութիւններուն հետ: «Ան չուզեր զայրացնել Էրտողանի կառավարութիւնը՝ հայերու ի նպաստ սուր հարցեր բարձրացնելով: Այսպիսով ան Թուրքերուն պատգամ կը յղէ որ 2015-ը չուտով կը մօտենայ»,- ըսաւ Հացպանեան:

Հացպանեանի համաձայն, այս առաջին անգամն է որ քուրտ ղեկավարը 1915-ի դէպքերը կը կոչէ ցեղասպանութիւն:

Սարգիս Հացպանեան դիտել տուաւ որ, Օճալան լուռ անցած է հայերու կոտորածներուն մէջ քուրտերու մասնակցութեան, տեղահանութեան եւ արեւմտեան Հայաստանի գրաւումին վերաբերող հարցերուն վրայէն:

## Սերժ Սարգսեանի Համաձայն

*Շարունակուած էջ 1-էն*

ընդհանուր արժէքների, մարդու իրաւունքների յարգման, օրէնքի գերակայութեան եւ ժողովրդավարական ազատութիւնների նկատմամբ նուիրուածութեան հիմքի վրայ: ԵՄ-ի հետ մեր երկխօսութեան՝ Հայաստանում բարեփոխումների անցկացման մեր պարտաւորութիւններին եւ փոխշահաւէտ համագործակցութեան ընդլայնմանը վերաբերող մասը շարունակում է մնալ որպէս առաջնահերթութիւն մեր յարաբերութիւնների օրակարգում»:

# Ի՞ՆՉ ԱՍԱՑ ՕՋԱԼԱՆԸ

*ԱԼԻՆ ՕԶԻՆԵԱՆ*



*Քրդական աշխատաւորական կուսակցութեան (PKK) քաղաքական թեւի (KCK) համանախագահ Բեսէ Յոզաթի՝ հայերին եւ յատկապէս հայկական Սփիւռքին ուղղուած անհիմն մեղադրանքներից յետոյ, քուրդ որոշ գործիչներ, փորձելով մեղմել նրա յայտարարութիւնները, արդիւնքում աւելի խճճեցին հարցը: Նման խառը ժամանակահատուածում շէֆը՝ Ափօն, այսինքն՝ PKK-ի առաջնորդը, Իմրալըի կալանաւոր Աբդուլլահ Օջալանը, բանտից ուղերձ յղեց, որ յատուկ նամակ է ուղարկելու հայերին, ու մենք՝ հայերս, պատմութեան ընթացքում չգիտեմ արդէն քանիերորդ անգամ սխալուեցինք՝ կարծելով, որ նախկինում էլ Սփիւռքի մասին հակասական յայտարարութիւններով յայտնի գործիչը պարզաբանումներ է բերելու, շտկելու եւ սրբագրելու է գործընկերոջ սխալները:*

*Օջալանի նամակը հրապարակուեց Յունուարի 30ին: Այն ոչ թէ ներողութեան փորձ էր, այլ՝ Ցեղասպանութեան 100րդ տարելիցի նախօրէին հայերին ուղղուած հանդարտութեան կոչ եւ նախազգուշացում:*

*Ափօն աշխարհում եւ Թուրքիայում վաղուց մոդայից դուրս եկած ձախակողմեան քաղաքական «ժարգոնով» զարդարած նամակում յաճախ օգտագործելով «կապիտալիստ, փողային ուժեր, ժողովուրդներ, լոբիներ, արտաքին ուժեր, ազգայնական եւ ռասիստական թակարդներ» բառերը՝ Թուրքիայի պատմական սխալների մեղքը նետում է անհասկանալի արեւմտեան ուժերի վրայ:*

*Նա 1915ին տեղի ունեցածը բնութագրում է որպէս նոյն տարածաշրջանում տեղի ունեցած բազմաթիւ ցեղասպանութիւններից մէկը: Թուրքիային եւ աշխարհին կոչ է անում առերեսուել իրականութեան հետ: Սա նամակի այն մասն է, որ ունելով դուրս է քաշուել, կտրուել ընդհանուր բովանդակութիւնից եւ խանդավառ մեկնաբանութիւններով տեղ գտել հայաստանեան եւ Սփիւռքի մամուլում:*

*Օջալանը, ընդունելով Հայոց Ցեղասպանութեան փաստը, ուշադրութիւն է հրաւիրում, որ այն միակը չի եղել «Անատոլիայում» (Օջալանը եւ քրդերն առհասարակ խուսափում են Արեւմտեան Հայաստան բառն օգտագործել), որտեղ հարիւրամեակների ընթացքում տարբեր դաւանանքներ եւ լեզուներ են կորսուել: Դրանից անմիջապէս յետոյ նա խորհուրդ է տալիս հայերին «չխաբուել արտասահմանեան կապիտալի աղբիւրների սոսկալի խաղերին», այսինքն՝ Սփիւռքին, որը պայքար է մղում Ցեղասպանութեան ճանաչման համար:*

*Թուրքական բանտի «կալանաւորը» չգիտես ինչու խուսափում է արտայայտուել 1915ի պատճառահետեւանքային կապերի մասին, նոյնիսկ բառ չի ասում Ցեղասպանութիւնում քրդերի ներգրաւուածութեան, Համիդիէ Ջոկատների, հայերի «լքեալ» գոյքին քրդերի տիրանալու, առեւանգուած, դաջուած եւ բռնի քրդուհի դարձուած հայ երեխաների մասին:*

*Ափօն չի բաւարարւում հայերի Ցեղասպանութեան ճանաչման գործընթացն անուանել «սոսկալի կապիտալիստական խաղ» եւ կոչ է անում հեռու մնալ լոբիստական գործողութիւններից: Քաջ գիտակցելով, որ Ցեղասպանութեան ճանաչման գործում հիմնական դերակատարումը լոբիստական շարժումն է եւ յոյս տալով, որ Թուրքիան միեւնոյն է՝ մի օր ճանաչելու է ոճիրը՝ «դուք հանգիստ մնացէ՛ք» բանաձեւով փափուկ բարձ է դնում հայերի գլխի տակ:*

*Բացի Ցեղասպանութեան ճանաչման գործը «կապիտալիստական խաղ» անուանելուց՝ Ափօն փոխհատուցման գործընթացն էլ յանգեցնում է՝ «Անատոլիան», «Մեր բոլորի օրրանն է, բոլորս էլ կը տեղաւորուենք» ձեւակերպմանը:*

*Անցեալի հետ առերեսուելու անխուսափելիութիւնը, որ նա առաջարկում է Թուրքիային, ցաւօք, ինքն էլ չի կարողանում յաղթահարել հաշուի չառնելով ո՛չ «լոբիստ կապիտալիստներ» անուանած Սփիւռքին, ո՛չ էլ Հայաստանի հայութեանը: Կարճ ասած՝ նրա նամակն ուղղուած է Թուրքիայում դեռ գոյութիւն պահպանելու փորձեր անող 50 հազար հայերին, յատկապէս «Ակօս»ի ընթերցողներին:*

*Որոշ շրջանակներ ինչքան էլ փորձեն նրան ներկայացնել Թուրքիայի սահմաններից դուրս քաղաքական ուժ ու կարողութիւն ունեցող առաջնորդ՝ իրականութիւնը մի քիչ այլ է: Ափօն Հայոց Ցեղասպանութիւնը Թուրքական պետութեան հետ ոչ թէ սակարկութեան առարկայ է դարձնում, այլ լինելով պետութեան գերին՝ փաստօրէն առաջադրանք է կատարում: Թուրքիայի կողմից արդէն տասը տարի առաջ քաշուած՝ «աղքատ Հայաստան», «բոբօ Սփիւռք», «խեղճ Թրքահայութիւն» բանաձեւն այսօր շատ ցայտուն արտայայտւում է Ափոյի նամակում:*

*Ուշագրաւ է նամակն ուղղելու առիթը եւ ժամանակը: Ճիշդ է՝ ուշացաւ նամակը, սակայն այն գրի է առնուել Հրանդ Դինքի մահուան տարելիցի կապակցութեամբ եւ այնտեղ յատուկ ընդգծւում է Թուրքերի կողմից շատ յաճախ բարձրաձայնուած Հրանդ-Սփիւռք շինծու հակադրութիւնը: Նամակի մէջ յաճախ է ընդգծւում նաեւ Հրանդի նուիրուածութիւնն «ազգերի եղբայրութեանը» եւ դրանով կարծես թէ կրկին շեշտւում է Ցեղասպանութեան հարցում Հրանդի ու Սփիւռքի կարծիքների տարբերութիւնը: Իրականում, Հրանդի գործունէութեան հիմնական նպատակը Ցեղասպանութեան ընդունումը եւ Արեւմտեան Հայաստանի հայկական տարածք լինելն ապացուցելն է, որն Ափօն մոռանում է:*

*Ափօն օգտագործելով Հրանդի յիշատակը, փորձում է Թուրքական հայատեաց քաղաքականութեան իրագործողներից մէկը դառնալ: Ցեղասպանութեան հետեւանքով էթնիկապէս ոչնչացուած ազգից մնացած մշակութային եւ հոգեւոր արժէքներն էլ վայրագօրէն աւերելով՝ հայի անունն ու պատմութիւնը մաքրուեց Արեւմտեան Հայաստանից, հայկական տարածքներն աստիճանաբար վերածուեցին «Քրդստանի»:*

*Որպէս վերջաբան՝ Ափոյի նամակի մէջ ոչ մի դրական բան չկայ, իսկ Ցեղասպանութիւն բառն օգտագործելը փափուկ բարձ է, որից չպէտք է թուլանալ, այլ հակառակը...*

# ԲԱԳՐԱՏ ԷՍԹՈՒՔԵԱՆ. «ՖՐԱՆՍՈՒԱ ՀՈԼԼԱՆՏԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ ՊԱՏԳԱՄ ՄԸՆ ԷՐ ԹՈՒՐՔԻՈՅ»

*ՍԱԳՕ ԱՐԵԱՆ*

*Պոլիս հրապարակուող «Ակօս» շաբաթաթերթի հայկական բաժնի խմբագիր Բագրատ Էսթուքեանի կարծիքով Ֆրանսուա Հոլլանտի երէկ Հրանդ Տինքի պարագաներուն հետ կայացուցած հանդիպումը պէտք է հասկնալ որպէս պատգամ: «Յատկապէս Ֆրանսայի մարդու եւ փոքրամասնութիւններու իրաւունքներու նկատմամբ տածած ուշադրութիւնը ընդգծելու համար է որ Ֆրանսուա Հոլլանտ հանդիպեցաւ Հրանդ Տինքի պարագաներուն հետ: Ըսեմ նաեւ, որ հանդիպումէն ետք Խոսրով (Հրանդ Տինքի եղբայրը - Ս. Ա.) Թրքական լրատուական միջոցներուն ըսաւ որ՝ հանդիպումը ընտանեկան բնոյթ կը կրէր ու իրենք կարիք չեն զգար այդ մասին հասարակութիւնը իրազեկելու»:*

-Բայց Պարոն Էսթուքեան, Հրանդ Տինքը ընտանեկան խնդիրներով չմեռաւ չէ՞:

*-Հարկաւ չմեռաւ ի՛նչ խօսք: Բայց պէտք է խոստովանիլ, որ այդ սենեակին մէջ մէկ կողմէ Հոլլանտին եւ եւ միւս կողմէ Րաքէլի, Պայծառի եւ Խոսրովին մէջ տեղի ունեցած զրոյցներուն մասին ես ալ անտեղեակ եմ:*

-Ուրեմն ի՞նչ պատգամի մասին է խօսքը:

*-Իմ կարծիքով Հոլլանտի Հրանդ Տինքի այրիին հետ հանդիպիլ ուզելը եւ իր պաշտօնական ծրագրին մէջ այդ հանդիպումը դնելը պէտք է պատգամ նկատել: Այդ կեցուածքը ինքնին պատգամ է: Ոչ թէ խօսուածը: Հոն խօսուածը սա պահուս ինծի անծանօթ է:*

-Պատգա՞մ, բայց ի՞նչու:

*-Որովհետեւ Հոլլանտ կու գայ այնպիսի երկիրէ մը որ երկար ատենէ ի վեր լուրջ տարակարծութիւններ կայ Թուրքիոյ հետ յատկապէս մարդու իրաւունքներու, ժողովրդավարացման եւ խօսքի ազատութեան թեմաներով: Այս տարակարծութիւնները բաւական լարուած մթնոլորտ մը ստեղծեցին մանաւանդ Ֆրանսայի նախկին նախագահ (Նիքոլա Սարքոզի.- Ս. Ա.) իշխանութեան օրերուն:*

-Իսկ հիմա ի՞նչ հարթակի վրայ են այդ յարաբերութիւնները:

*-Պէտք է ըսեմ, որ այդ լարուածութիւնը նաեւ տնտեսական լուրջ վնասներ տուած էր երկու երկիրներուն: Հոլլանտի այցը ուրեմն նպատակ ունէր կարգաւորել յարաբերութիւնները ինչու չէ նաեւ մեղմել լարուածութիւնը: Հոլլանտի գլխաւոր նպատակը ըստ իս նաեւ տնտեսական յարաբերութիւնները կարգաւորելն է:*

-Ի՞նչպէս:

*Բացատրեմ: Երէկ օրինակ Թուրքիոյ մամուլին մէջ կը խօսուէր որ Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ տնտեսական փոխանակման ծաւալները կը հասնին 12 Միլիառ Ամերիկեան Տոլարի եւ այս այցով Նախագահ Հոլլանտ նպատակ ունի այդ փոխանակման ծաւալները 20 Միլիառ Ամերիկեան Տոլարի հասցնելու: Ու բնականաբար այդ յարաբերութիւններուն մէջ առիւծի բաժինը Ֆրանսայինն է, որովհետեւ Թուրքիա աւելի շատ գնելիք ունի Ֆրանսայէն քան հակառակը: Կայ նաեւ Ջերմուժ արտադրելու խնդիրը: Սա պահուն Թուրքիա հետամուտ է Ջերմուժ արտադրելու յատուկ կայաններ կառուցելու եւ այս առումով Ֆրանսա հետաքրքրուած է այդ կայաններու շինութեան մէջ գործառքներ ստանձնելու:*

*Էսթուքեան նաեւ հաւաստեց որ այս հանդիպումը Պոլսահայութեան համար կարեւոր եւ անկիւնադարձային հանդիպում մը պէտք է նկատել:*

*Իսթուքեան նաեւ յոյս յայտնեց որ այս գործընթացները կը ծառայեցուին հայկական խնդիրներու առնչութեամբ որոշ դրական տեղաշարժ մը արձանագրելու մանաւանդ որ իր կարծիքով այս հանգրուանին Թուրքիոյ մէջ արձանագրուող ցանկացած դէպք անմիջական կապ ունի Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման 100-ամեակի ընդհանուր մթնոլորտին հետ:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 100,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**----------------------- **Fax :** -------------------------

# ԱՌԱՋ ԵՒ ԵՏՔ: 1915 ԺԽՏՈՒՄ ԵՒ ԱՌԵՐԵՍՈՒՄ

2007-ի Ապրիլ 24-25-ին տեղի ունեցած է գիտաժողով

նախաձեռնութեամբ «Անգարա Մտածողութեան Ազատութիւն Նախաձեռնութիւն» կազմակերպութեան:

Ձեռնարկին իրենց օժանդակութիւնը բերած են 20-է աւելի կազմակերպութիւններ, որոնց շարքին գլխաւորաբար, Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն Կուսակցութիւնը (BDP), Սոցիալիստ Դեմոկրատական Կուսակցութիւնը (SDP), Ընկճուածներու Սոցիալիստ Կուսակցութիւնը (ESP) եւ ուրիշներ:

Գիտաժողովը նուիրուած էր Հրանդ Տինքի սպանութեան երրորդ տարելիցին: Գիտաժողովին իրենց մասնակցութիւնը բերած են տարբեր ազգութիւններէ 30-է աւելի զեկուցաբերներ եւ ներկայ եղած են օտար դեսպաններ եւ դիւանագէտներ:

Պաշտօնական բացման կազմակերպիչ մարմնին կողմէ ելոյթ ունեցած է Ֆիքրէթ Պաշքայամ որ իր ելոյթին մէջ ըսած է.«Այսօր եւ վաղը, այստեղ մեր քննարկելիք հարցը իրականութեան մէջ, վարչակարգին 100 տարուայ խնդիրն է: Ուստի, մենք այս երկու օրերու տեւողութեամբ, 95 տարուայ սուտը բացայայտելու պիտի աշխատինք»:

Գիտաժողովի նիւթերը ամփոփուած են 37 յօդուածներու մէջ, որոնք կը կազմեն այս առիթով լոյս տեսած «1915-էն առաջ եւ ետք. ժխտում եւ առերեսում» գիրքին 448 էջերը:

This week, the Heritage Foundation in Washington, D.C. held a panel discussion entitled "Marked for Destruction: the Plight of Syria's Christians with Syrian Christian Leaders." The panel featured Reverend Adib Awad, General Secretary of the National Evangelical Synod of Syria and Lebanon, H.E. Bishop Elias Toumeh, The Orthodox Bishop of Pyrgou-Syria, Reverend Dr. Riad Jarjour, Presbyterian clergyman from Homs, Syria and the former General Secretary of the Middle East Council of Churches (1994-2003), H.E. Bishop Dionysius Jean Kawak, Metropolitan of the Syrian Orthodox Church, and His Grace Bishop Armash Nalbandian, Primate of the Armenian Church of Damascus. The discussion was co-hosted by the Westminister Institute and Barnabas Aid Fund, who was represented by International Director Dr. Patrick Sookhdeo. Bishop Julian Dobbs of the Anglican Church of North America made introductory remarks, while Becky Norton Dunlop, Heritage Vice President of External Relations, opened and closed the program.

To explain the current situation in Syria, the panelists provided a historical context of centuries-long persecution and massacres of Christians in the greater Middle East. Speaking first was Rev. Dr. Riad Jarjour, who talked at length about the "indigenous Christians" of Syria. He expressed the uncomfortable feeling registered among Christians, especially since Ottoman times, directly citing "what happened to the Armenians." Jarjour went on to state that Christians in Syria today do not feel safe "in the land they were born." He then reflected on current events, highlighting the kidnapping of priests and nuns, the confiscation of churches, and the brutal beheading of Armenians all by Al-Qaeda/Al-Nusra Front and other extremist groups. "At least 80 people have been used as human shields in Homs," said Jarjour, "they are not allowed to leave the city." In a plea to all Syrians, Jarjour warned of the consequences of a "Syria without Christians," sharing his view that not only will the Christian community of Syria loose, but that Syria's Muslims will also loose a very significant segment of their society.

Bishop Dionysius Jean reflected on specific episodes of Christian persecution in the Ottoman Empire. He mentioned the massacres of Christian Armenians "since 1860 and 1895," the latter a direct reference to the Hamidian Massacres that served as a precursor to the Armenian Genocide.

Unafraid to share some of the most alarming reports of recent Islamic extremism was Rev. Abid Awad. He called attention to "terrorists" in Syria "from 83 countries" that he said were "armed, supported and funded by Saudi Arabia, Qatar and Turkey." Rev. Awad talked about the recent beheading of Armenians who reportedly were killed when they refused to convert to Islam. According to Awad, their heads were sent to adjacent Christian villages, in order to instill fear among Christian populations in Syria. "The priests buried the bodies without their heads," he exclaimed.

In an expression of solidarity, with all the various religious groups in Syria, Bishop Nalbandian warned against heeding the calls of Islamaphobes. Nalbandian explained the uniqueness of the Armenian situation. "After the Armenian Genocide, Syrian Muslims accepted us, welcomed us," Nalbandian said. Nalbandian differentiated between secular Syrian Muslims who want peace and the foreign extremists who are kidnapping and killing Christians.

Addressing the panel from the audience, Archbishop Vicken Aykazian, Diocesan Legate of the Armenian Church of America (Eastern) stated, "Three close allies of the United States, Saudi Arabia, Qatar, and Turkey, are supporting terrorist groups in Syria." "What can America do to hold countries like Turkey accountable for supporting extremists in Syria," he asked. The dignitaries tried to avoid delving into politics.

There are a number of steps that the U.S. can take, such as a drastic reduction and/or full cessation in the transfer or sale of U.S. military aid and equipment to such countries. It's not about dismissing the U.S.-Turkey relationship; it's about putting the relationship on an honest footing - be it Turkey's inexplicable campaign to deny the Armenian Genocide or its blatant support of Islamic extremists whose efforts run counter to U.S. values. Friends don't let friends support terrorists. It's time U.S. taxpayers stopped footing the bill, too.

## Award-Winning Heist Film "Abstraction" Premiering at the New Beverly Cinema




HOLLYWOOD, CA – In its first showing of 2014, the multi-award winning independent feature film, "Abstraction" arrives at the historic New Beverly Cinema in Hollywood, owned by filmmaker Quentin Tarantino. "Abstraction" will premiere there on February 12, 2014 at 8:30pm, as part of the 11th annual Hollywood Reel Independent Film Festival, where it will also receive three new accolades.

"Abstraction" is an intense action crime drama revolving around the heist of a half a million dollar painting. It is written and directed by Prince Bagdasarian and stars the likes of Academy Award® nominee Eric Roberts and Ken Davitian, who is best known for his controversial role in "Borat".

For the last few months, "Abstraction" has continued screening at prominent festivals while selling out many showings. The film has garnered over a dozen nominations and is the winner of nine awards, including "Excellence in Film". Following its Toronto, Canada premiere last November, Oscar® nominated director Atom Egoyan stated to director Prince Bagdasarian, "You've done an amazing job getting the best from your actors, great locations, and excellent cinematography... very impressive."

"Abstraction has received rave reviews from audiences and industry professionals alike in the last year" says director Prince Bagdasarian. "I anticipate our very first screening of 2014 to be a great success. It's exciting to once again be presenting the film to our thousands of local fans and ollowers in Hollywood."

For more information about the film and to purchase tickets to the February 12th HRIFF festival screening of "Abstraction" at the New Beverly Cinema, please visit: http://www.abstractionfilm.com Tickets to the screening can also be purchased directly from: http://goo.gl/mnpq81

## Dr. Levon Chookaszian to Speak on "The Armenians of the Crimea and Romania as Seen Through Their Art"



FRESNO -- Dr. Levon Chookaszian, Director of the UNESCO Chair of Art History at Yerevan State University, will give a presentation on "The Armenians of the Crimea and Romania as Seen Through Their Art," at 7:30 PM on Wednesday, February 12, 2014. The lecture will be held in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191, on the Fresno State campus and is part of the Armenian Studies Program Spring 2014 Lecture Series.

The lecture is co-sponsored by the Virginia-based Ararat Foundation, which was founded in 1985 and promotes Armenian culture and Christian faith, through lectures on Armenian subjects, seminars, literature distribution and research. The Foundation has worked independently and in cooperation with other groups and has sponsored over sixty lectures, held mostly in Washington DC. Dean Shahinian organized the Foundation and has served as Executive Director since its inception.

The study of the artistic legacy of the Armenians in medieval Crimea and Romania allows for the reconstruction and imagining, to a certain degree, of a broader picture, a kind of mosaic of the culture of immigrants from Armenia. The Armenian churches, monasteries, and illustrated manuscripts, are the main art works testifying to the presence of Armenians in medieval Crimea and Romania and their cultural activity there. Prof. Levon Chookaszian will explore this rich, but for many, little known cultural heritage.

Dr. Levon Chookaszian is the UNESCO Professor of Armenian Art History at Yerevan State University and one of the leading authorities in the world on Armenian art. He is the author of two monographs: one on the art of 13th century Armenian miniaturist Grigor (Grigor Tsaghkogh, 1986), and the other on the art of the painter Arshag Fetvadjian (Arshag Fetvadjian, 2011). Chookaszian has taught at Yerevan State University since 1978 and is one of the founders of the department of art history. In 1996 he established the UNESCO Chair of Armenian Art History. Since 1992 he has delivered nearly two hundred lectures at universities, libraries, and museums across the world.

The lecture is free and open to the public.

For more on the lecture please contact the Armenian Studies Program at 559-278-2669.

## Ararat-Eskijian Museum Presents Lecture on "Portrait and Representations: Alfred of Wessex and Gagik of Vaspurakan: Progress and Prospects"



MISSION HILLS -- Dr. Anne Elizabeth Redgat will present an illustrated lecture on "Portrait and Representations: Alfred of Wessex and Gagik of Vaspurakan: Progress and Prospects, on Sunday, February 10, 2014, a 7:00 p.m. at the Ararat-Eskijian Museum, Sheen Chapel, 15105 Mission Hills Road, Mission Hills, CA. The event is sponsored by the Ararat-Eskijian Museum and the National Association for Armenian Studies and Research (NAASR).

In this lecture Dr. Redgate will present her work comparing the early-tenth-century King Gagik Artsruni of Vaspurakan with his near-contemporary, the late-ninth-century King Alfred of Wessex (in southern England), and their ideas about kingship. Both kings commissioned works of art and historical writings, and the comparison draws on these. She will also discuss her most recent work on the sculpture that decorates a window at the seventh-century Armenian church of Ptghni and the family of its founders, the Amatunis, and their ideas and claims concerning political authority. She will reflect on the similarities between King Alfred and King Gagik, the importance of the Amatunis to the Artsrunis and some links between Amatuni Ptghni and King Gagik's early-tenth-century Church of the Holy Cross on Aghtamar, Lake Van. These are the foundations for her next book, whose working title is Christian Kingship in England and Armenia from the Late-Ninth to the Mid-Eleventh Century; Liturgy, Law and Self-Representation (Edwin Mellen Press).

Anne Elizabeth Redgate is Lecturer in History at Newcastle University (Newcastle upon Tyne) in the UK, where she has taught Anglo-Saxon history, Armenian history, and World History. She is the author of The Armenians (Oxford: Blackwell Publishers, 1998) and Religion, Politics and Society in Britain, 800-1066 (in press, Routledge), contributions to conferences and volumes in the UCLA Historic Armenian Cities and Provinces series, and other articles. She is especially interested in the centuries between 300 and 1100 AD, in questions of national identity, vernacular liturgy, heresy, the use of artistic imagery as a medium of political expression, and comparative history.

For more information contact the Ararat-Eskijian Museum at 818-838-4862 or ararat-eskijian-museum@netzero.net or NAASR at 617-489-1610 or hq@naasr.org.

## The 2014 Global Game Jam Weekend at Mt. Sierra College

MORNOVIA, CA – Mt. Sierra College organized and served as one of the sites of the Global Game Jam (GGJ) for the third consecutive year on the weekend of January 24-26. The Global Game Jam, the world's largest game jam event (game creation), takes place around the world every year at different physical locations and fosters the spirit of collaboration. Global Game Jam is like a marathon focused on game development and facilitates a global creative interest in games, while exploring the process of development by programming, interactive design, narrative exploration or artistic expression.

Based on the structure of a GGJ, participants gather on Friday late afternoon at different sites globally, watch a short video keynote with advice from leading game developers, and wait for a "secret theme" to be announced. All sites worldwide are then challenged to make games based on that same theme, with games to be completed by Sunday afternoon. This year's theme was "we don't see things as they are, we see them as we are."

A record number of 74 students participated in the 2014 version of Global Game Jam at Mt. Sierra College, creating six original digital and one board game during the 48 hour jam session. Students from Game Arts, Media Arts, Information Technology as well as Business participated in this year's development of games. Games developed by Mt. Sierra College students were themed around memory loss ("Masks"), robot awakening drones ( "MazOr LazOr"), influence of imaginary friends ("Fate of Influence"), psychological thrill ("Deceit") and mystery action adventure ("Spectacle").

Mt. Sierra College awards were given in the categories of "Best Team Collaboration," "Most Experimental," "Interpretation of the Theme," "Innovative Concept," "Outstanding Level Design," "Outstanding Programming" as well as others.

This year's Global Gam Jam was by far one of the most creative thus far. "I am beyond impressed with not only the turnout this year in participation but the caliber of the games created. I truly believe our students have outdone themselves and we are all very proud of what they achieved personally and professionally" said Tawny Hernandez, Assistant Director of Student Services at Mt. Sierra College.

# ԱՅՍՕՐ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻՆ ՀԵՏ
## (ԾՆՆԴԵԱՆ 90-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

**ԱԻԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ**

*Անտարակոյս, 20-րդ դարու կէսի հայ բանաստեղծութեան տիտանը Պարոյր Սեւակն է: Արեւելահայ գրականութեան ադամանդեայ շղթան՝ Յովհաննէս Թումանեանով, Վահան Տէրեանով եւ Եղիշէ Չարենցով օղակուած, կ՚ամբողջանայ Պարոյր Սեւակով, որ ընդամէնը 47 տարի ապրելով, հայ գրականութեան կտակեց ոչ միայն անգնահատելի ժառանգութիւն, այլ՝ իր մնայուն պատուանդանը ապահովեց հայ գրականութեան պանթէոնին մէջ: Տաղանդաշատ բանաստեղծ, հմուտ գրականագէտ, ջղուտ հրապարակախօս ու գրական-մշակութային հասարակական գործիչ, այլեւ՝ փիլիսոփայ ու մտածող, սերունդներու յիշողութեան մէջ կը մնայ իր վա՛ռ կերպարով եւ ինքնատիպ անհատականութեամբ:*

*Այսօր, Պարոյր Սեւակի ծննդեան 90-րդ տարեդարձին, բարեպատեհ առիթն է հպանցիկ քաղուածք մը կատարելու անոր կարգ մը հրատապ եւ ուղղորդիչ միտքերէն. անգամ մը եւս ըմբոշխնել անոր վաստակէն մնացած գաղափարներն ու նշխարները:*

*Ան կեանքի ու տառապանքի նկատմամբ ունի իր ուրոյն մօտեցումը: Զկքելու, կեանքի դժուարութիւնները յաղթահարելու, չարչարանքն ու գրկանքը հեշտութեամբ կրելու եւ վերջապէս լաւատեսութեամբ դիմակալելու ամէն ցաւ ու կսկիծ, եղած են անոր գլխաւոր խրատականները իր որդիին: Արդարեւ, «Նորից Քեզ Հետ» բանաստեղծական շարքէն «Որդուս» (1955-56 թ.) ոտանաւորին մէջ կը գրէ.*

Դու սիրոյ հետ միշտ հաշտ ապրիր, բայց խոյս մի տայ տառապանքից.
Նա սրբում է աչքը փոշուց, նա մաքրում է հոգին ժանգից:
Տառապանքից չեն մեռնում, չէ՛, այլ աւելի են պնդանում,-
Ապաքինուած սիրտը յետոյ գալիք ցաւը հեշտ է տանում:

*Ինչ մխիթարական եւ խորիմաստ դիտողութիւն. տառապանքը մարդս կը կոփէ, կը պնդացնէ եւ կը զինէ գալիք մարտահրաւէրներուն ընդառաջ: Այն սիրտը, որ վիշտ է կրած, նոր ցաւերն ու կսկիծները աւելի դիւրութեամբ կ՚ընկալէ եւ աւելի հզօրացած այս ալեկոծեալ կեանքին մէջ կրնայ տոկալ եւ խուսանաւել. փաստօրէն, տառապանքը կ՚ամրապնդէ մարդուս դիմադրական բնազդը, ինքնապաշտպանութեան ունակութիւնը: Մեզմէ շատերու նման իրավիճակ պատահած չէ՞ արդեօք: Պարոյր Սեւակի ակնարկը ընդհանուրին է, ցանկացած մարդու:*

*Ազգային չեշտուած ուղղութեան կողքին, բանաստեղծին մօտ առկայ է վրիժառութեան զգացումը. ան չի հանդուրժեր թրքական եաթաղանին պատճառած արհաւիրքը. չ՚ընդունիր պարտուողական ու ներողամտութեան թուլութիւնը. ունի ընդգծուած գայրոյթ եւ նահատակներու արեան փոխհատուցման պահանջ: «Հանդիպում» քերթուածին մէջ կ՚ընդգծէ.*

Եւ իմ պառաւ մօրը, որ ոչ մէկը չունի եօթ եղբօրից,
Ինչպէ՞ս հարկադրբել, որ «Համիտ» լսելիս չհասկանայ իրէշ...
Մեր զոհերի արեան հատուցումն է անցնում որդուն հօրից,
Այդ թուերին ծնուած հազարաւոր որբեր զո՛ւր չեն կոչուել «Վրէժ»:

*Թուրք հրէշէն վրէժ կը պահանջէ ան: Տակաւին 1950 Մայիսին գրուած այս բանաստեղծութիւնը կը վկայէ, թէ խորհրդային կարգերուն տակ իսկ Պարոյր Սեւակ ունեցած է անկաշկանդ արտայայտութիւն եւ բուռն ընդվզում: Արդեօ՞ք անոր նմանները չէին որ պահանջատիրական ոգին առկայծ պահեցին հայրենի ժողովուրդին մօտ: Արդեօ՞ք անոր նմանները միտքերը չսերմանեցին պահանջատիրութեան եւ արդար վրիժառութեան, որ իր արտայայտութիւնը ունեցաւ 1988-ի ղարաբաղեան շարժման եւ պայքարի ընթացքին: Բանաստեղծը, իր օրին, արդեօ՞ք գիրով եւ գրիչով չնախապատրաստեց հայ մարդուն արիութեան ոգին ու կամքը, վրիժառու ըլլալու մարտակոչը:*

*Միւս կողմէ, հետաքրքիր է ընդգծել, թէ բանաստեղծը յեղափոխականի վայել խիզախութեամբ չեշտած է զէնքի կարեւորութիւնը: Սովորաբար, բանաստեղծէ մը քնքշութիւն եւ զորով ակնկալուող կարծրատիպը շուռ կու գայ՝ յանուն զէնքի փառաբանումին եւ անհրաժեշտութեան: Արտասովոր նկատուող այս կեցուածքը կ՚արտայայտուի 1962-ին գրած «Եւ Այր Մի Մաշտոց Անուն» երկարաշունչ բանաստեղծութեան Ե. հատուածին մէջ.*

Քաջերի սահմանն իրենց զէնքն է հենց:
Քաջեր մի՛շտ էլ կան,
Զէնքն է հարկաւոր:

Ահա Պարոյր Սեւակին հրահանգը՝ «Զէնքն է հարկաւոր»:

*Մինչ, դառնացած է բանաստեղծը մեր ժողովուրդին դժնեայ ճակատագիրէն, քանի հայը աշխարհի չորս ափերուն կ՚արարէ, կ՚աշխատի եւ կը տքնի օտարներու համար. ան լքած է իր տունը, հեռացած է իր օճախէն, հայրենի հողէն, կը հերկէ այլոց արտն ու դաշտը: Այս մտահոգութիւնը անցեալին ափսոսանք կը պատճառէր անշուշտ, այսօր միթէ՞ աւելի ահաւոր չէ պարագան, երբ անկախ Հայաստանէն հայրենալքումը ահազնացած է անհակակշռելի տարողութեամբ: Դարձեալ «Եւ Այր Մի Մաշտոց Անուն» գործի ԺԱ. հատուածէն մէջբերում մը.*

Յետոյ մենք պիտի մեր շէնքից զրկուած՝
Քաղաք շինէինք աւերն ուրիշի:
Յետոյ մենք պիտի մեր հերկից զրկուած՝
Հերկէինք օտար կորդ ու առապար:
Յետոյ մենք պիտի մեր ոտնահետքի
Դրօշմը դարձրած իւրովի դրօշ՝
Մխէինք բոլոր լայնքերի վրայ
Երկիր կոչեցեալ այն կլոր գնդի,
Որտեղ պիտի որ ամէն ճանապարհ
Վերստին բերի իր տեղը նախկին,
Բայց մեզ... հայրենիք չբերնց երբեք...

*Սա շառաչուն ապտակ չէ՞ այն ժողովուրդին, որուն մեծամասնութիւնը կ՚ապրի հայրենիքէն դուրս.*

Շար.ը էջ 18

# ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ԾՆՆԴԵԱՆ 90 ԱՄԵԱԿ
## 1924-1971




**ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ**

*«Եղիցի լոյս» այս էր իր պատգամը, մեր բոլոր մեծերուն պատգամը: Պարոյր Սեւակ կ՚ուզէր որ լոյսը տարածուի մեր հայաշխարհի վրայ: Այդպէս չէ՞ր Ներսէս Շնորհալին իր՝ «Առաւօտ Լոյսով»:*

*Այդպէս չէի՞ն Չարենցը մեծ եւ Մահարի Գուրգէնը, մեր բոլոր մեծերը, լոյսի ծարաւ, լոյսի սերմնացան էին:*

*«Եղիցի լոյս»-ը Պարոյր Սեւակին լոյսին եկած վերջին գիրքն է, կը կարծեն շատեր:*

*Բայց իր մահէն ետք պարզուած է թէ Սեւակ աւանդ թողած է մեզի ձեռագրեր, ուր կան ոչ միայն անտիպ բանաստեղծութիւններ, այլ՝ նոյնպէս այլ ուսումնասիրութիւններ մինչեւ անգամ վէպ:*

*Վիպային եղաւ այս լոյսի սերմնացանին կեանքը, որ եթէ ծնաւ 1924-ին Զանախճի կոչուած գիւղի մը մէջ Երեւանէն Ջերմուկ գացող երթուղիին կէս ճամբուն վրայ, ահա եւ անոր կեանքը տապալեցաւ նոյն այդ ճամբուն վրայ արկածահար 1971 թուականին:*

*Պարոյրը գիտնական էր նաեւ վկայ իր գրած գիրքը Սայեաթ-Նովայի մասին: Պարոյրը մեր մայրենի լեզուի բառապաշարը ճոխացնողը եղաւ հարիւրաւոր նորաստեղծ բառերով, եզրերով, վկայ այդ մասին հեղինակուած գիրքը:*

*Լոյսի երգիչ Սեւակի ձայնն է որ կը լսենք այսօր երբ ան ըսած է.*

Լո՜յս, լո՜յս զուարթ...
Եւ ո՛չ թէ լոյս երեկոյի,
Ի մտանել արեգական,
Այլ լոյս զուարթ արդար գոյի՝
Շաղաւոտն առաւօտի...

*Զարմանալի իրողութիւն է, որ Պարոյր Սեւակ մեկնեցաւ այս կեանքէն, երբ 47 տարեկան էր՝ ստեղծագործ իր կեանքին առաւել փթթումի օրերուն:*

*Ի զուր չէր, որ երբ Պարոյր Սեւակ Սայեաթ-Նովայի մասին իր գրած երկասիրութեան պաշտպանութիւնը կ՚ընէր բազմահարիւր ունկնդիրներու ներկայութեան, իր ընդդիմախօսը՝ Սայաթնովագէտ Հասրաթեան բեմին վրայ այնքան յուզուած էր, որ յայտարարեց.- աշակերտը յաղթեց իր ուսուցիչին: Իսկ վարէն ներկաները զսպանակուած անդոհական ուժէ մը բարձրաձայնեցին մէկ մարդու պէս.- դոկտորակա՜ն, դոկտորական..*

*Ու Պարոյր Սեւակ տիրացաւ դոկտորականի:*

*Մեր զարգացող գրականութեան Նիակարայի Ջրվէժն էր Պարոյր Սեւակ որպէս ամեհի ուժ, նոր երթ մը բանալով հայոց բանաստեղծութեան մէջ Նարեկացին յիշեցնելով իր թափով.-*

Երկնքից առկախ մի լեռնակղզի՝ Հայաստան աշխարհ
Երկնքից առկախ այս լեռնակղզու ուղիղ կենտրոնում
Երկու զանգ հսկայ եւ անձեռագործ:
Եւ այնքան հսկայ, այնքան վիթխարի,
Որ չէին կարող որեւէ կեռից ոչ մի կերպ կախուել,
Ուստի պարզապէս գործուած են հողին:
Անունն՝ Արարատ
Կամ
Սիս ու Մասիս:

*Ինը բալանոց երկրաշարժային զօրութիւնը ունի այդ անձեռակերտ Մասիսը, որ մերն էր որուն՝ Սիս ու Մասիսին լեզուակները երբ շարժին՝*

Իսկ ով ունկ ունի,
Յաւատոյ բլթակ՝
Նա լսում է միշտ եւ նրանց ձայնը,
Ղօղանջը նրանց:

*Այսօր Պարոյր Սեւակի ծննդեան 90 ամեակին առիթով ա՛յս է մեծագոյն ղօղանջը՝ փախնիլ սպիտակ ջարդէն ու դառնալ բռունցք:*

*Միթէ նոյն ղօղանջը չարձակե՞ց Շահան Շահնուր գրեթէ եօթանասուն տարի առաջ՝ կռուեցէ՛ք ձեր ատամներով...:*

*Եւ միթէ մեծագոյն ճշմարտութիւն չէ՞ Պարոյր Սեւակին մէկ այլ խօսքը.-*

Եւ արժի՛ ասել, որ ինչպէս երէկ, այնպէս էլ այսօր
Օտարութեան մէջ ազատ լինելն էլ ա՛յլ գերութիւն է,
Իսկ տան մէջ նոյնիսկ գերի լինելը՝ ա՛յլ ազատութիւն:

*Ու եկէք, մեծ մտածողի այս պատգամներուն վրայ աւելցնելով դարակէսի հիմնէն համար մը, ունկերը մեր լայն բացած.-*

Առաջներում մերպէսներին
Այրում էին խարոյկի մէջ...
Հիմա պիտի խարոյկ վառենք մենք ինքներս,
Խարոյկ՝ մեզմո՛վ:
Աղը կրակ է հանգեցնում:
Բայց մենք պիտի մեր կրակով աղն էլ վառենք,
Որ աւելի բոցավառուենք,
Այնպէս վառուենք,
Որ չմնայ նոյնիսկ մոխիր ու մնացորդ...:

*Ու գոչենք հայրենիքով մէկ, սփիւռքով մէկ, Արցախով մէկ՝ Շնորհաւոր 90 ամեակդ ազատութեան մեծ երգիչ՝ Պարոյր Սեւակ:*

*Հազար ապրիս, հազար ապրիս դու՛ն լոյսի մեծ սերմնացան, լոյսերովդ դուն մահն անգամ յաղթեցիր:*

# ԳՐՈՂԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
# ՈՒԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

***«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻ» արխիւից***

*1934 Թուի Հոկտեմբերի 15-ին հրատարակուեց իմ առաջին գիրքը՝ «Խիզախ երիտասարդը Թռիչքաձողի վրայ եւ այլ պատմուածքները»: 1934 Թիւը միանգամայն մօտ է Թւում, բայց փաստն այն է, որ արդէն քսան տարի է, ինչ ես գրում եմ: Այդ քսան տարիներին շատ բաներ պատահեցին, այդ Թւում՝ եւ ինձ հետ:*

*Գրելուց բացի, որեւէ այլ ճանապարհով գոնէ մէկ տոլար չեմ վաստակել: Գրել եմ կարճ պատմուածքներ, պիեսներ, վէպեր, ակնարկներ, բանաստեղծուԹիւններ, գրախօսուԹիւններ, բազմազան մեկնաբանուԹիւններ, խմբագիրներին ուղղուած նամակներ, անձնական նամակներ եւ երգեր:*

*Ոչինչ չեմ գրել պատուէրով, պայմանագրով կամ փողի համար, Թէպէտ գրածներիս մեծ մասով փող եմ վաստակել: ԵԹէ մի խմբագիր հաւանէր պատմուածքս այնպէս, ինչպէս գրել էի, կարող էր գնել: ԵԹէ պատուիրէր փոխել որոշ մասեր, չէի անի: Ոչ ոք չի պատուիրել: Մի խմբագիր կամայականուԹիւններ էր Թոյլ տուել Ծննդեան տօների առԹիւ գրած մի կարճառոտ գործիս հանդէպ, եւ մի հեղինակ, որի խոհարարական գրքի համար նախաբան էի գրել անվճար, մի քանի տող էր աւելացրել՝ փորձելով ինձ հայրենասէր գինուոր ներկայացնել: Ես բողոքեցի խմբագրի եւ խոհարարական գրքի հեղինակի դէմ, բայց, իհարկէ, վնասն արդէն կար: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ես որեւէ քարոզչական բան չգրեցի, Թէպէտ մի շարք անգամներ ինձ հրաւիրել են գրելու: Բանն այն է, որ քսան տարի շարունակ ես եղել եմ ամերիկացի գրող՝ լիովին ազատ ու անկախ:*

*Որպէս տպագրուող գրող՝ անցած քսան տարիներս համարում եմ կեանքիս առաջին կէսը, իսկ յաջորդ քսան տարիներս՝ երկրորդ կէսը: Երբ այդ տարիներն անցնեն, ես վաԹսունվեց տարեկան կը լինեմ, գուցէ շատ ծեր, գուցէ՝ ոչ: Յաջորդ քսան տարիներին ես ակնկալում եմ աւելի շատ ստեղծագործել, քան առաջին քսան տարիներին եմ արել, Թէպէտ այս շրջանը մի շարք խոչընդոտներով եմ սկսում: Նախ եւ առաջ, ես այնքան շատ ժամկէտ անց հարկեր ունեմ վճարելու, որ Թուաբանօրէն գրեԹէ անհնար է գրելով այդ հաշիւները փակել, ու նաեւ ձեռք եմ բերել այլ անձնական, բարոյական եւ ֆինանսական պարտաւորուԹիւններ:*

*Ես երբեք նպաստառու չեմ եղել, երբեք չեմ ընդունել որեւէ գրական մրցանակի կամ պարգեւի դրամական օժանդակուԹիւնը, երբեք մշտական եկամուտ չեմ ունեցել ու երբեք դրամաշնորհ կամ Թոշակ չեմ ստացել: Առաջին գրքիս հրատարակուԹիւնից մէկ-երկու տարի յետոյ ընկերներս ինձ ստիպեցին դիմում ներկայացնել՝ Գագենհեմի ընկերակցուԹեան անդամ դառնալու համար: Ի հակառակ իմ առողջ դատողուԹեան՝ ես դիմում ներկայացրի, որը անհրաժեշտաբար, եԹէ ոչ միտումնաւոր, պատահականուԹիւն էր: Օրինակ, ես ինչպէ՞ս պիտի իմանայի, Թէ ինչ եմ ուզում գրել: Հաւանաբար, չէի կարողացել նկարագրել: Իմ դիմումը մերժուեց ես կրկին սկսեցի ազատ շնչել:*

*Ես գլխովին Թաղուած եմ պարտքերի մէջ: Ակնկալում եմ, որ պարտքերս կը մարեմ գրելով կամ էլ ոչ մի կերպ չեմ մարի: Ես ո՛չ խնայողուԹիւններ ունեմ, ո՛չ բաժնետոմսեր, ո՛չ անշարժ գոյք, ո՛չ ապահովագրուԹիւն, ո՛չ կանխիկ գումար եւ ո՛չ էլ որեւէ իրական սեփականուԹիւն, որը կարելի լինի փոխանակել փոքր-ինչ պիտանի փողով: Ես պարզապէս ստիպուած եմ եռանդուն գործել՝ ապրուստս հայԹայԹելու համար: Այս ամէնն անանձնաբար եմ նշում, որպէս փաստեր, եւ ոչ Թէ խղճահարուԹիւն արԹնացնելու համար: Ինձ դա պէտք չէ:*

*Թէ որ բնոյԹով գործնական մարդ լինէի, հիմա, ինչպէս ասում են, ֆինանսապէս ապահովուած կը լինէի: Կարծում եմ՝ ֆինանսական ապահովուԹիւնը վատ բան չէ, բայց ես այլ ապահովուԹիւն եմ նախընտրում: Նախընտրում եմ ընդունել այն ճշմարտուԹիւնը, որ պէտք է աշխատեմ, եւ հաւատալ, որ կարող եմ:*

*Ես ահագին փող եմ վատնել, որը վաստակել եմ որպէս գրող, իսկ մեծ մասը տանուլ եմ տուել խաղամոլուԹեամբ: Թւում է, Թէ բնոյԹով վատնող ու խաղամոլ եմ եղել. այդքան բան: Վաստակածիս մի մասը բաժանել եմ, գուցէ եւ՝ մեծ մասը: Ես գիտեմ, Թէ ինչ ասել է փող ունենալու անյարմարաւէտուԹիւն, որ զգացել եմ, երբ փող եմ ունեցել, եւ այն պարտադրանքը, որ զգացել եմ այս կամ այն կերպ այդ փողից ազատուելու համար: Կարծում եմ՝ ես զգացել եմ, որ կարիք ունեմ միայն գրող լինել, ստեղծագործող գրող եւ ոչ Թէ յաջողակ մէկը:*

*Փող դիզելու կարողուԹիւնը կամ պարտադրանքը միշտ Թուացել է բարդ, եԹէ ոչ վիրաւորական մի բան: Մինչդեռ ես միշտ համակրել եմ այն մարդկանց, ովքեր վարպետօրէն են փող դիզում, ովքեր գիտեն, Թէ ինչպէս օրինական ճանապարհով խուսափել հարկեր վճարելուց, ինչպէս ճիշտ ժամանակին խցկուել փող շինելու այնպիսի նոր ու շահուԹաբեր տարածքներ, ինչպիսիք են ներդրումները, անշարժ գոյքը, գիւտերը, նաւԹը, ուրանը, պետական պայմանագրերը, պիեսներին աջակցելը, մշակող արդիւնաբերուԹիւնը եւ մարքեԹինգը: Ինձ միշտ զուարճացրել է այդ մարդկանց ակնառու խորաԹափանցուԹիւնը, նոյնիսկ, երբ ինձ են յաղԹել իրենց խորամանկուԹեամբ:*

*Օրինակ, երբ ծառայում էի բանակում՝ Օհայոյի ձների մէջ, խոր ձմրանը մի շատ ճարպիկ փողատէր, որը բաւականին հարուստ ու երիտասարդ էր եւ չէր ծառայում բանակում, Նիւ Եորքից Թռել էր Օհայօ՝ ինձ հետ քննարկելու այն փոփոխուԹիւնները, որոնք, ինքը զգում էր, ես պէտք է անէի իմ պիեսներից մէկում, որի համար նա ինձ նախապէս հազար տոլար էր վճարել: Ես նրան հանդիպեցի այն ժամանակ, երբ ինձ Թոյլատրեցին՝ ըստ բանակային կանոնադրուԹեան, մինչեւ վերջ ուշադիր լսեցի, եւ դա ինձնից ահագին ժամանակ խլեց, որը ես կը նախընտրէի ինձ համար պահել: Մարդը խօսում էր ու խօսում, եւ յանկարծ ես հասկացայ, որ իրականում նա ցանկանում էր, բայց չէր կարողանում ասել, որ ինքը զգում էր՝ պիեսը յաջողուԹիւն չի ունենայ, եւ չգիտէր ինչ անել այդ հազար տոլարի հետ: Դա ինձ չզարմացրեց: Ես հազար տոլարի չէք տարայ հիւրանոց եւ մի կարճ երկտողի հետ Թողեցի սեղանին: Ուզում էի տեսնել՝ արդեօք կանխազգացումս ճի՞շտ էր: Ճիշտ էր: Յաջորդ երեկոյեան մենք պէտք է հանդիպէինք: Չհանդիպեցինք: Նա չէքը ձեռքին վերադարձաւ Նիւ Եորք, վերածեց կանխիկի, եւ ես այլեւս նրանից լուր չստացայ: Ես այդ հազար տոլարը վերադարձնելու որեւէ իրաւական կամ նոյնիսկ բարոյական պատճառ չունէի: Պարզապէս չկարողացայ դիմանալ, երբ տեսայ, Թէ որքան էր նա վշտացել այդ փոքր գումարի պատճառով՝ ամբողջ ժամանակ ձեւացնելով, Թէ իրեն միայն արուեստն է հետաքրքրում:*

*Երբ Հոլիվուտի կինօարտադրող խոշորագոյն ընկերուԹիւններից մէկում ես յայտնաբերեցի, որ ինձ խաբելով մղել էին անպէտք գործարքի, հանդիպեցի ղեկավարներին, ովքեր իրականացրել էին այդ հիասքանչ խաբէուԹիւնը, ապացուցեցի, որ խաբել էին, նստեցի մեքենաս եւ ուղեւորուեցի Սան Ֆրանցիսքօ: Տարիներ անց ինձ ասացին, որ ըստ համաձայնագրի՝ խաբէուԹեանը վերաբերող գիտէի, ինձ հասանելիք վարձատրուԹիւն էր մնացել այնտեղ, որը տատանւում էր հինգից տասնհինգ հազար տոլարի միջեւ: Ես երբեք չհետաքննեցի այդ հարցը: ԸնկերուԹիւնն ու նրա գլխաւոր փայատէրերը միլիոնների հասնող շահոյԹ էին կորզում խղճուկ քարոզչական կինոնկարներից՝ ջանասիրաբար ու եկամտաբեր աշխատելով կառավարուԹեան հետ, բայց եւ այնպէս, վեց Թէ եօԹ ղեկավարներ անչափ անհրաժեշտ էին համարել համերաշխօրէն գործելով՝ խաբել այն գրողին, որի պատմուածքն այնքան դժուարուԹեամբ էին ձեռք բերել՝ ստանալով երեք-չորս միլիոն տոլարի հասոյԹ: Ես պատկերացում չունեմ, Թէ նրանք ինչ են արել այդ փողով, բայց վստահ եմ, որ ծախսել են զգուշաւոր ու անմիտ մի բանի վրայ:*

*Իմ առաջին գրքի հրատարակուԹիւնից առաջ ես չէի խմում, բայց երբ այն լոյս տեսաւ, ես յայտնաբերեցի խմելու իմաստնուԹիւնը, եւ կարծում եմ՝ մի պահ արժէ այս մասին մտածել:*

*1935 Թուին չափաւոր էի խմում եւ կեանքումս առաջին անգամ ճամբորդեցի Եւրոպայով, բայց յաջորդ ինը տարիներին, նախքան բանակ զօրակոչուելս, խմում էի այնքան, որքան ուզում էի, եւ յաճախ ինը-տասը ժամ անընդմէջ խմում էի:*

*Այնուհանդերձ, շատ հազուադէպ էի հարբում: Ես բաւականուԹիւն էի ստանում, երբ խմում էի ու բարձրաձայն զրուցում ընկերներիս հետ, որոնք գրողներ էին, նկարիչներ, քանդակագործներ, լրագրողներ եւ Սան Ֆրանսիսքոյում մեզ ծանօԹ աղջիկներ ու կանայք:*

*Լաւ ընկերակիցների հետ խմելը լաւ է գրողի համար, բայց Թող գրողն ուշադրուԹիւն դարձնի այս համեստ եւ գուցէ ոչ անհրաժեշտ զգուշացմանը. վերջ տուէք խմելուն, երբ խմելն ինքն է սկսում վերջ դառնալ, քանզի դա անմիտ վերջ է: Կարծում եմ՝ ես շատ բան եմ սովորել ընկերներիս հետ խմելով, այնպէս, ինչպէս մեզնից շատերը կարող են ասել՝ մենք շատ բան ենք սովորել քնի մէջ: Բայց եւ այնպէս, մի հաստատուած սահման կայ այն ամէնի համար, ինչը կարելի է սովորել խմելով:*

*Անցած քսան տարիներին իմ գրածների մէջ ինչի՞ համար եմ զղջում:*

*Ոչնչի: Ոչ մի բառի համար:*

*Ես բաւարա՞ր չափով եմ գրել:*

*Ո՛չ: Ոչ մի գրող երբեւէ բաւարար չափով չի գրում:*

*Ես կարո՞ղ էի այլ կերպ գրել: Ասենք՝ աւելի խելամտօրէն:*

*Շար.ը էջ 18*







# ՀԱՅԸ

*ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ*
*«Հայաղբրտիք»–էց*

*Աստուած Հայը հրեշտակ է ստեղծած. վերջը գղջացած է ու սատանայի է վերածած: Յետոյ ջնջած է անոր սատանայութիւնն ալ: Հայը, սակայն, երկու էակներէն մէյ մէկ բան պահած է իր մէջ: Աստուած Հայը երկիր ղրկած է՝ իբրեւ փէնոմէն: Հայը մարդ չկրցաւ ըլլալ աշխարհի մէջ:*

*Դիւրաւ կարելի է ճանչնալ զինքը: Ունի գլուխ մը, որուն գանգուր մազերը մրրիկի մը մէջ են՝ նման իր լեռնաշխարհին ալեկոծութեան: Իր աչքերը՝ սեւով ու լոյսով խառն, լիճեր են, որոնց մէջ նետուած են իր ցեղային հանճարին քնարները, նկարները, ճարտարապետական ոճերը, ազգային պատմութիւնը: Այդ բոլորը վեր կ'ելլեն, երբ հով մը փչէ: Իր լիճերէն կ'ելլեն բարութեան անոյշ գետեր: Իր քիթը Արարատ մըն է: Խօսակցութիւնն ալ երկրաշարժ: Կռնակէն աւելի շուտ կարելի է ճանչնալ զինքը: Երբ տեսնես մէկը, իր ետեւէն, որ ծոծրակին մազերը կտրել տալու համար շատոնց է սափրիչին չէ գացած, վստահ կրնաս ըլլալ, որ անիկա Հայ է:*

*Դժուար է, սակայն, զինքը ճանչնալ իր ներսէն:*

*Առաջին քննութեամբ կ'ըսես՝ Թիւ է ան: Կը կարդաս իր Թուանշանները ու կը տեսնես, որ տակէն կ'ելլեն բառեր: Կ'ըսես՝ խօսք է ան: Կ'ընթեռնուս խօսքերը ու կը գտնես, որ ոտանաւոր է: Կը նկատես, սակայն, որ բնաւ չափ չունի ու կ'եզրակացնես՝ հանելուկ է ան: Կը ճգնիս գտնել ի՛նչ ըլլալը, մէյ մըն ալ կը տեսնես, որ առեղծուած է եղեր: Կ'աշխատիս լուծել, սակայն, առեղծուածը քենէ աւելի կ'աշխատի չլուծուելու համար: Հայը աշխատանք կը կարծես ու կ'ըսես իրեն. «Ինչքան գործունեայ ես, եկուր միասին քրտինք Թափենք հանրային գործի մը համար»: Կուգայ, բայց ատեն մը վերջը կը խորհրդածես. «Ան գործի մարդ է անձնական ձեռնարկի մէջ ու խօսքի մարդ՝ հանրային ձեռնարկի մէջ»: Օր մըն ալ կ'իմանաս, որ դրամ է դիզեր: Ան՝ խաբուած Աստուծմէ ու իր արարածներէն, փարեր է մամոնային ու նոյնացեր է անոր հետ: Շիներ է տուն, բացեր է խանութ, ի՛նչ փոյթ, թէ ոտքերը յաճախ իր տան պատուհանէն դուրս են ելած ու իր գլուխը իր խանութին դռնէն դուրս է: Կը չափէ, կը կշռէ, Թիւերը ձիւԹ է ըրեր ու կը ծամէ: Ճահիճը քաղաք կը շինէ ու անապատը՝ շուկայ: Կը բացականչես՝ էվրէքա՜, նիւԹ է ան:*

*Տօնական օր մըն ալ կը մտածէ եկեղեցիի ու դպրոցի մասին: Իր մտածումին չափ արագ գրեԹէ՝ կը կանգնէ տաճարը եւ ուսումնարանը: Տարի մը ճիւղերուն չափ միութիւններ կ'արձակէ: Օրեր կ'անցնին, մեր փէնոմէնը մատուռին առջեւ կը հայհոյէ ու վարժարանին առջեւ կ'աղօԹէ: Իր լուտանքին ու փառաբանութեան մէջ միշտ յափշտակուած քրիստոնեան է: Նոր եզրակացութեան մը հասած կ'ըսես՝ ոգի է ան:*

*Սակայն, երբ իր խանութը երԹաս, կը գտնես Հրեայ մը, երբ իր ժողովին երԹաս, կը գտնես Բիւզանդացի մը, երբ իրեն հետ յարաբերուիս, յաճախ կը գտնես Քիւրտ մը, երբ հրապարակ երԹաս, կը գտնես ճինիվիզ մը: Բայց եԹէ իր տունը երԹաս, այնտեղ կը գտնես իր լաւագոյն յատկութիւնները: Ու մէջէն չես կրնար ելլել:*

*

*Հայը, երբ կուսակցական է, կը ճառէ ազատութենէ, երբ չէզոք է, կը խօսի միութենէ: Իբր մարդ՝ անիշխանական է, իբր Հայ՝ ազգայնական: Անգամ մը որ տիրանայ իր հայրենիքին, կրկին անիշխանական կը դառնայ:*

*Քաղաքական կեանքի մէջ գործազուրկ է, ու գործազրկութեան նպաստ չի տրուիր իրեն: Հայասէրներու բարոյական լումաներով կը կառուցանէ սպանիական դղեակներ եւ, անոնց մէջ նստած, կարկանդակներ կ'որոճայ:*

*ԵԹէ տարագրուի կամ աղքատանայ կամ երբ աշխարհի հեռաւոր մէկ անկիւնը իյնայ, շուտով կը գտնէ հացի ճամբան: Փորձէ իրեն նպաստ տալ՝ այն ժամանակ կը ծուլանայ, մոլութենէ մոլութիւն կը գլտորի:*

*Կարելի չէ ոչ սուրով, ոչ հուրով սպաննել զինքը: Զինքը մեռցնելու միակ միջոցը իրեն նպաստ տալն է:*

*Կրօնաւորները լաւ գիտեն այս գաղտնիքը ու հայուն վրայ կը վազեն աղէտներէ վերջը՝ տանելով նպաստի, կաԹոլիկութեան կամ բողոքականութեան սնտուկներ եւ պարկեր: Հայը լերան մը վրայ կանգնած ըլլայ, ու միսիոնարը լեռան ստորոտը՝ պարկը բացած, Հայը ահագին բարձրութենէն, մէկ ոստումով, ամբողջ գլուխովը կը մտնէ պարկին մէջ:*

*Հայը, ինչով ալ զբաղի, կ'ընէ նաեւ դագաղագործութիւն: Ան ամէն օր կը շինէ քանի մը դագաղ՝ բան մը Թաղելով իրմէ: Բարեբախտաբար, անսպառ է իր կենդանութիւնը: Լաւ դագաղագործ ըլլալով՝ լաւ ալ մեռել Թաղող եղած է:*

*Գիտունները կը փնտռեն յաւիտենական շարժումը: Հայը կը խնդայ անոնց վրայ ու կ'ըսէ իւրովի. «Ե՛ս եմ յաւիտենական շարժումը, եւ ինծի է, որ կը փնտռեն»: Ինքն ալ, սակայն, բան մը կը փնտռէ՝ Անկախութիւնը, ու զայն գտնելու համար օտարին դռները ափ կ'առնէ: Կ'ըսես իրեն. «Անկախութիւնը դուն պիտի յայտարարես»: Այս անգամ կը չէզոքանայ՝ անկախ հռչակուելու համար:*

*Շատ Թերթ ու գիրք կը հրատարակէ: Ասով կ'ապացուցանէ որ երբեք չէ ներկայացուած Տիար Յուսահատութեան եւ ոչ մէկ ծանօԹութիւն ունի անոր հետ:*

*Ինչ որ իրն է ու անմիջապէս դրամի չի վերածուիր, չի գնահատեր: Օրինակ իր տաղանդաւորները: Բայց վա՜յ, եԹէ իր ցեղին պատկանող միջակ մը ստանայ օտարներու ներբողականը. չտեսի մը նման, մեծով պզտիկով, բարեկենդան կը սարքէ, կ'ուռի եւ կը պայԹի:*

*Ինկի՛ր, ու Հայը ձեռք մը կուտայ քեզի: Ելի՛ր ու կ'ընդունիս իր ոտքը կամ իր նախանձէն եկող կիցը. որ, սակայն, ազգօգուտ է, որովհետեւ կը մարզէ քեզ եւ պատճառ կ'ըլլայ, որ պինդ կենաս ու ա՛լ չիյնաս:*

*Հայուն կրնաս ցոյց տալ բոլոր կարողութիւններդ, սակայն մի՛ յայտներ իրեն զրպանիդ կարողութիւնը, աւելի ճիշդը ըսելով՝ անկարողութիւնը: Իր համարումը եԹէ չվերնայ իսկ, անպայման կը պակսի: Ան քեզ անգին կամ Թանկագին կը կարծէր ու կը համոզուի, որ աժան ապրանք ես: Ան չուզեր սորվիլ արժէքին ու գինին մէջ գտնուող տարբերութիւնը:*

*Հայը կապուած է իր ցեղին, իր լեզուին, քիչ Թէ շատ՝ իր օրաԹերԹին ու գրականութեան եւ մշակոյԹին: Սակայն վայ, եԹէ օտար լեզու մը սորվի կարդացածը հասկնալու*

*Շար.ը էջ 19*



## ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ
## ԿԱՍԻԱՅԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

*Կասիան, առաջին հերթին, մեծ կիրառում ունի խոհարարութեան եւ օծանելիքի արտադրութեան մէջ: Սակայն անիկա ունի այնպիսի յատկութիւններ, որոնց շնորհիւ կրնայ հրաշքներ գործել նաեւ կանացի գեղեցկութեան պահպանման հարցով:*

*Նախ ծանօթանանք կասիայի գեղագիտական յատկութիւններուն: Կասիան հարուստ է հակաօքսիտանդներով եւ աղանիւթերով, որոնք կը հանեն բորբոքումը եւ կը նպաստեն արեան շրջանառութեան կարգաւորման: Այս պատճառով ալ գեղագէտները կասիան կ՚օգտագործեն մաշկի մաքրութեան եւ սնուցման համար:*

*Կասիայով դիմակ դէմքի համար: Ծգմեցէք պանանի 1/3-րդ մասը, աւելցուցէք 2 ապուրի դգալ թթուասեր (sour cream), 1 թէյի դգալ կասիա եւ քանի մը կաթիլ լիմոնի հիւթ: Ստացուած խառնուրդը քսուկ (cream) քսեցէք դէմքին եւ պահեցէք 15 վայրկեան: Այնուհետեւ դէմքը լուացէք տաք ջուրով եւ քրէմ քսեցէք: Անմիջապէս կը զգաք, թէ ինչ նուրբ եւ փափուկ դարձած է ձեր մաշկը:*

*Մազերու աճի դիմակ: Կասիան կարելի է օգտագործել իբրեւ մազերու արագ աճը խթանող միջոց: 2 ապուրի դգալ մածունը, նոյն քանակով ձիթաիւղը, 1 հաւկիթը, 1 թէյի դգալ կասիան եւ 1 թէյի դգալ մեղրը լաւ խառնեցէք: Ստացուած խիւսը քսեցէք մազերու երկայնքով եւ 15 վայրկեան ձգեցէք մազերուն: Յետոյ մազի յատուկ օճառով լուացէք մազերը:*

*Մարմինը թարմացնող քսուկ: Կասիան հիանալի միջոց է մարմնի արդիւնաւէտ քսուկ պատրաստելու համար, անիկա յատկապէս յարմար է չոր մաշկի համար: Կէս գաւաթ ձիթաիւղին աւելցուցէք 1 թէյի դգալ կասիա եւ 1 ապուրի դգալ շագանակագոյն շաքար: Կանգնեցէք տաք ցնցուղի տակ, մարմինը թրջեցէք եւ նուրբ շարժումներով՝ ստացուած խառնուրդը քսեցէք մարմնին: Եթէ ձեր մաշկը ունի միջին չորութիւն կամ ճարպոտ է, ուստի խառնուրդի մնացորդները մարմնէն հեռացուցէք՝ օգտագործելով մարմնի օճառ, իսկ եթէ մաշկը չոր է, ուստի մարմինը ցօղուեցէք ջուրով եւ մի օգտագործէք գեղագիտական այլ միջոցներ:*

*Կասիայի իւղը կարելի է օգտագործել ոչ միայն իբրեւ գեղագիտական միջոց, այլեւ բուժիչ նպատակով: Քանի մը կաթիլ կասիայի իւղը կաթեցուցէք ներշնչման համար նախատեսուած ջուրի մէջ, կամ զայն խառնեցէք նուշի ձէթի հետ (կասիայի ձէթի 1-3 կաթիլը՝ 5 մլ նուշի ձէթի հետ): Այս խառնուրդը քսեցէք կուրծքի հատուածին եւ մէջքին, որ կ՚օգնէ արագ յաղթահարելու պաղառութիւնը:*

## ՁԻԹԱՊՏՈՒՂԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

*Հնագոյն ժամանակներէն սնունդի մէջ օգտագործուող ձիթենիի պտուղները այսօր ունին աւելի մեծ տարածում, ապահոված են իրենց տեղը իւրաքանչիւր սեղանի վրայ եւ նոյնիսկ կարելի է ըսել՝ կը հանդիսանան մարդու առողջութեան «պահապան»:*

*Ձիթենին մշտապէս կանաչ ծառ է:*

*«Նշեմ, որ Երկրի բոլոր շնորհներէն ձիթապտուղի իւղն քու անվերջանալի հանգստութիւնդ է՝ քու կանաչ սիրտդ»,- կը գրէ Փաուլօ Ներուտան իր «Ձիթապտուղի մասին օդային մէջ»:*

*Միջերկրածովեան գրեթէ բոլոր երկիրներուն մէջ կ՚աճեցնեն ձիթենիի ծառ: Մարմնի վրայ ոչ մէկ բացասական ազդեցութիւն չունեցող ձիթապտուղի իւղը կը պարունակէ սպիտակուցներ, A, D, K, C, B, E կենսանիւթեր, քարօթին, ինչպէս նաեւ՝ պիոֆլաւոնոյիտներ, եւ առհասարակ անիկա կը համարուի սնուցման աղբիւր:*

*Ամերիկացի գիտնականները պարզած են, որ ձիթապտուղի իւղի բաղադրիչներէն մէկը մարդու մարմնի վրայ ունեցած հակաբորբոքային ազդեցութիւններով շատ նման է իպուփրոֆենին: Այդ բաղադրիչը կրնայ պահպանել մարմինը շատ հիւանդութիւններէ, ինչպէս՝ սիրտ-անօթային, ուռուցքային եւ Ալցհէյմըրի հիւանդութիւնները: Եւրոպական հինգ երկիրներէ 182 մարդու վրայ իրականացած հետազօտութիւնները ցոյց տուած են, որ օրուան մէջ շատ քիչ քանակով ձիթապտուղի ձէթ ընդունիլը կ՚իջեցնէ մարմնի մէջ բջիջային փոփոխութիւններն ու վնասուածքները, որոնք ընդունակ են յանգեցնելու ուռուցքային հիւանդութիւններու:*

*Թէ՛ ձիթենիի պտուղները, թէ՛ ձէթը շատ օգտակար են աղեստամոքսային աշխատանքին: Կարեւոր չէ՝ կը գերադասէք օգտագործել կանա՞չ, թէ՞ սեւ ձիթապտուղ, միեւնոյն է, երկուքն ալ կը պարունակեն մեծ քանակով երկաթ ու վերը նշուած օգտակար նիւթերն ու կենսանիւթերը: Աղցանի մէջ խորհուրդ կը տրուի զայն օգտագործել կա՛մ երկու մասի բաժնած, կամ՝ ամբողջական:*

*Շատ օգտակար է ճաշին մէջ օգտագործել ձիթապտուղի ձէթի պարունակութեամբ հաց կամ սովորութիւն դարձնել այն, ինչ կը տապկէք, պատրաստեցէք ձիթապտուղի ձէթով:*

## ԻՆՉՊԷ՞Ս ՊԱՀՊԱՆԵԼ ԼԱՒ ԿԱԶՄՈՒԱԾՔ

*Կինը ամենաշատ յուզող հարցը լաւ կազմուածք ունենալն ու զայն պահպանելն է: Ներկայացուող սննդակարգն ու գործողութիւնները թոյլ կու տան պահպանելու բարետես կազմուածք:*

*Օրուան ընթացքին ընդունեցէք ոչ աւելի, քան 1200 քիլոքալորի եւ 25 կրամ ճարպեր (8 կր նախաճաշին, 12 կր ճաշին, 5 կր ընթրիքին):*

*Պահպանեցէք ուտելու յստակ եղանակ. նախաճաշը առաւօտեան ժամը 10-ին (թթուակաթնային մթերք), ճաշը ժամը 14.00-ին (ապուր կամ խաշած բանջարեղէն, հաւու կրծքամիս առանց իւղի, հաց), ընթրիքը ժամը 17.00-18.00 (թթուակաթնային մթերք, միրգեր, բանջարեղէն): Միրգը պարտադիր 1-2 հատ:*

*Օրական կատարեցէք միժամեայ մարզանքներ տարբեր խումբ մկաններու համար:*

## Ի՞ՆՉ ԿՐՆԱՅ ԸՆԵԼ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԾԻԾԱՂԸ...

*Մենք բոլորս կը ձգտինք երջանկութեան եւ ուրախութեան, բայց մեզ շրջապատող կեանքին մէջ, հակառակը, աստիճանաբար կ՚աւելնան տագնապահարոյց իրադարձութիւններն ու ճնշումները: Իբրեւ արդիւնք մենք աւելի ու աւելի կը կտրուինք մեր բնական վիճակէն, որուն կը փոխարինէ արհեստական միջավայրը՝ արհեստական լուսաւորութիւն, արհեստական սնունդ, արհեստական յարաբերութիւններ: Բայց մեր հոգին կը պահանջէ բոլորովին այլ բան: Եւ ահա մենք կը սկսինք փնտռել ցանկալին: Կը փնտռենք տարածութեան ու ժամանակի մէջ, կը փնտռենք ուրիշներու մէջ, կը փնտռենք մենք մեր մէջ: Եւ պատկերացուցէք, որ կը գտնենք...*

*Ձենք կրնար ժխտել, որ իւրաքանչիւրիս կեանքին մէջ ալ կան երջանիկ պահեր: Անոնք կրնան ըլլալ վայրկեաններ, ժամեր, օրեր: Մենք զանոնք կ՚ընդունինք իբրեւ պարգեւատրում մեր ջանքերուն դիմաց եւ կը սպասենք, թէ երբ պիտի աւարտին, քանի որ կը հասկնանք՝ այն ամէնը, ինչ ունի սկիզբ, ունի նաեւ վերջ: Բայց որքա՜ն պիտի ուզէինք, որ այդ պահերը չաւարտէին: Իսկ այդ մէկը հնարաւոր է...*

*Կը պարզուի՝ մեր յիշողութիւնը կրնայ օգնել մեզի ժամանակի մէջ երջանկութեան զգացողութիւնը աւելի երկարաձգելու: Իսկ ատոր համար կայ մէկ գործիք, որ նման է մաքուր մթերքի, զերծ է վնասակար ազդեցութիւններէ, նոյնիսկ երեխաները կրնան օգտագործել զայն, չափազանց առողջարար է, անկէ կրնաք օգտուիլ երբ ուզէք եւ ուր ուզէք: Բոլորին համար մատչելի եւ համաշխարհային ըլլալով՝ անիկա նաեւ շատ անհատական է:*

*Ծիծաղ. ահա թէ որն է մեզ երջանկութեան պահեր պարգեւող համաշխարհային գործիքը: Անիկա ախտամերժութեան (immunity) այն բնական հատիկն է, որ թաքնուած է մեզմէ իւրաքանչիւրին մէջ: Հոգեբանները կ՚առաջարկեն անոր միջոցով երջանկութիւն արարել:*

*Մենք խեղաթիւրած ենք ծիծաղի նշանակութիւնը, քանի որ անիկա միայն կը կապենք ուրախութեան հետ: Եթէ ուրախանալու ոչինչ կայ, ուրեմն նաեւ ծիծաղիլը անտեղի է: Բայց չէ՞ որ բնութեան մէջ այդպէս չէ:*

*Ծիծաղը առողջութեան հզօր գրաւական է: Եթէ ժպտաս, ծիծաղիս, անկախ քու տրամադրութենէդ, ուղեղդ կ՚արտադրէ էնտոֆրիններ, որոնք մարմնին նոյնքան անհրաժեշտ են, որքան առողջ սնունդը: Անոնք կը կարգաւորեն ցաւային զգացողութիւնները, կը խթանեն ախտամերժութեան համակարգը, կը բարելաւեն սրտամկանի սնուցումը: Այլ խօսքով՝ էնտոֆրինները «երջանկութեան հորմոններն» են: Անոնց օգնութեամբ անյաղթահարելի խոչընդոտները կը սկսին ձեզի միանգամայն յաղթահարելի թուալ: «Ամենազօրութեան» այդպիսի վիճակը շատ մօտ է երջանկութեան զգացումին:*

*Ծիծաղը շատ բարենպաստ ազդեցութիւն կ՚ունենայ մեր հոգեբանութեան վրայ:*

*Մեր բոլոր հոգեբանական խնդիրները՝ բարդոյթները, ջղագրգիռ վիճակը, խոր յոյզերը սովորաբար գիտակցուած չեն, այսինքն կը գտնուին ենթագիտակցական մակարդակի վրայ: Անոնք կ՚արտացոլան մեր երազներուն մէջ, ստեղծագործութիւններուն մէջ եւ շրջապատի մարդոց նկատմամբ ջղային վերաբերմունքին մէջ:*

*Ի՞նչ կրնայ ընել սովորական ծիծաղը...Ծիծաղի եթերային ալիքը ամբողջ մարմնին կը ստիպէ շարժիլ եւ տատանիլ: Մարմնի լարուածութիւնը ծիծաղի ժամանակ կը թուլնայ, եւ հոգիին խորքը ամբարուած խնդիրները ջուրի երես կ՚ելլեն, մատչելի կը դառնան գիտակցական մակարդակի վրայ: Առողջ մարդը կը ծիծաղի ամբողջ մարմնով, ինչպէս փոքրիկները: Իսկ հիմա պատկերացուցէք, թէ ինչպէս կը ծիծաղի վտիտ, վատառողջ մարդը. ան պարզապէս կը քրքջայ քիթի տակ: Ծիծաղի ալիքը աւելի խոր չի հասնիր, քանի որ անոր ողջ մարմինը լարուած է: Այդ լարուածութիւնը տարիներու ընթացքին կը վերածուի իւրօրինակ պատեանի: Իսկ ծիծաղը ի զօրու է կոտրելու այդ պատեանը:*

*Այն հոգեբաններն ու եոկիները, որոնք մարդոց հետ աշխատելու ժամանակ կ՚օգտագործեն ծիծաղը, նկատած են, որ ծիծաղի միջոցով բուժումը ամենաարդիւնաւէտն է:*

*Մենք պէտք է վերականգնենք ծիծաղելու սովորութիւնը:*

*Հոգիով ուրախ մարդուն ծիծաղը անկեղծ է ու բնական եւ կը փոխանցուի միւսներուն, կը բարձրացնէ նաեւ անոնց տրամադրութիւնը: Հոգիէն բխող անկեղծ ծիծաղը գրաւիչ է ու վարակիչ: Դուք կը դառնաք շրջապատի սիրելին, կ՚արժանանաք հիացմունքի: Ծիծաղը կը դառնայ ձեր այցետոմսը, որ բոլորին կ՚ազդարարէ՝ «ես երջանիկ եմ, ես անկեղծ եմ, ես կը վայելեմ կեանքը»:*

## ՓՈՂԿԱՊԸ ԿԸ ԽՕՍԻ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

*Փողկապը կ՚արտայայտէ տղամարդու բնաւորութիւնը, սակայն անիկա ոչ մէկ ձեւով լիովին կը բացայայտէ տղամարդը... Ձէ՞ որ պճնանքի այս պարագան տղամարդոց երբեմն կը նուիրեն կանայք՝ թելադրելով բնաւորութեան իրե՛նց նախընտրած գիծը:*

*Մարդու բնաւորութեան հետ կը զուգորդուի փողկապը կապելու ձեւը. ինքնավստահ եւ ներուժով լեցուն մարդիկ կը գերադասեն լայն հանգոյցներ, իսկ թոյլ կը կապեն փողկապները մտաւորականութեան եւ արուեստագէտներու զգալի հատուած մը:*

*Պիսակաւոր փողկապ*

*Այն տղամարդիկ, որոնք կը նախընտրեն օլորներով ու պիսակներով փողկապներ, նպատակասլաց են եւ փառասէր. հանդիպելով իրենց երկրորդ կէսին՝ անոնք կը նուիրուին անմնացորդ: Նմանատիպ փողկապներ կը գերադասեն կրել անոնք, որոնք կ՚ուզեն գրաւել շրջապատի ուշադրութիւնը:*

*Գծաւոր փողկապ*

*Տարբեր գիծերով փողկապները կը նախընտրեն յարաբերութիւններու մէջ հաւատարմութիւն*

*Շար.ը էջ 19*

# ՓՈԽ ԱՌՆՈՒԱԾ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԱԾ ԱՐԻՒՆՈՏ ԺԱՌԱՆԳ

*Շարունակուածէջ 6-էն*

*տասխանատուութեան հատուցումը: Աշխատաւոր դասակարգին գիտակցական մակարդակը բարձր պահող, զարգացած եւ սոցիալիզմի գաղափարները շատ կանուխ իւրացուցած մտաւորականներուն սպանութիւնը եւ աքսորումը ընկերութեան զարգացման մակարդակը ոչնչացնելու եւ հասարակութիւնը դէպի խաւար դարձնելու կը միտէր:*

*Եւրոպականացման նպատակներով ճամբայ ելած երիտթուրքերը արեւմտեան քաղաքակրթութեան ամենավերջին տեղը չպրտուեցան, այսօր գոյութիւն ունեցող այս յետամնացութեան մէջ այս եւեւ չպրտուելու իրականութիւնը կը գտնուի:*

*Թուրք ազգութիւն մը ստեղծելու նպատակով իրագործուած այս հաւաքական ոճիրներու գործադրութեան մէջ կրօնական գործօնին յաճախակի օգտագործուելուն պատճառով, հասարակութեան մէջ կրօնական հիւանդագին ատելութիւն մը ժառանգ ձգուած է, որ հասարակութեան զարգացման եւ ժողովրդավարացման առջեւ մեծագոյն արգելքը կը հանդիսանայ: Այս ատելութիւնը մինչեւ օրս չէ սպառած եւ այդ կը կազմէ կեղծ շարիաթականութեան-աշխարհականութեան համակցման կարեւոր հիմքերէն մին:*

*Կրօնական ատելութեան հիման վրայ եղած սպանդներուն պատճառով Կովկասէն եւ Պալքաններէն հաւաքական վտարումներու հետեւանքով եկած իսլամներուն մօտ եղած ատելութիւնը աւելի արմատացաւ: Այս հիմք ծառայեց որպէսզի մեր հասարակութեան այլակրօն պատկանելիութիւն ունեցողներուն հանդէպ այլամերժութիւնը զօրանայ ու գոյատեւէ մինչեւ օրս:*

*Միլիոնաւորներու հասնող հսկայածաւալ կոտորածները ժողովուրդի մը վատառողջ բարոյական վիճակին ցուցանիշն է: Այս պատճառով է, որ բռնութիւնը տարածուած է ընտանիքներէն ներս, դպրոցին մէջ, բանակին մէջ, եւ հասարակական յարաբերութիւններու գրեթէ բոլոր բնագաւառներէն ներս:*

*Բռնութիւնը պատճառ եղած է ինքնակրկնուող վատառողջ ընկերութեան մը գոյացման:*

*Վատառողջ հասարակութեան մը յառաջացումին ամէնէն էական պատճառը Թուրքիոյ պետութիւնն է, որ բոլոր ազգերու դէմ գործուած ցեղասպանութիւններուն հատուցումը վճարած չէ եւ իր պատմական ամօթանքներուն հետ առերեսումի նստած չէ: Իսկ սպաննուածները միշտ յանցաւոր ներկայացնելը յառաջ բերած է «թշնամիին ոչնչացնելու մտայնութիւնը» եւ այսօր այդ մտապատկերը Թուրքի հոգիին մէջէն հանելը անհնար է: Այսքան մեծ թիւով մարդ բնաջնջած ըլլալուն պատճառով մեր երկիրը շրջապատուած է թշնամիներով: Այս իրականութիւնները տեսնելու համար հալածախտէ պէտք չէ տառապինք:*

*Հայոց Ցեղասպանութեան ժխտման հիմնական պատճառներէն մէկն ալ այն է, որ այս Ցեղասպանութեան ճանաչման պարագային ի յայտ պիտի գայ, որ Թուրքիան իր բոլոր կառոյցները բռնութեան եւ արիւնոտ ժառանգութեան մը վրայ հիմնած է եւ այս իրականութիւնը մեզ կը դնէ ընդհանրական այս հիւանդութեան բուժում մը գտնելու ստիպողականութեան առջեւ:*

*Սեփական պատմութեան հետ առերեսումով միայն, կրնանք բուժում մը գտնել:*

*Ֆաշիստական հիմքերու վրայ կառուցուած հոգեվիճակէն փրկուելու միակ ձեւը ժողովրդավարացումն է: Այս գործընթացին վերջաւորութեան նոր մտածելակերպ եւ գիտակցութիւն ձեռք բերած Թուրք ժողովուրդին, երկու տարին անգամ մը ռազմական դրութիւն յայտարարելու խարդաւանքները չեն խաբեր:*

*Բռնատիրական որեւէ իշխանութիւն իր դիմաց ժողովրդավարական ընդդիմադրութիւն պիտի գտնէ: Հետեւաբար բռնութեան միջոցով դրամագլուխի կուտակումներ կատարած եւ իր գերիշխանութիւնը շարունակող պուրժուազիան, այլեւս առաջուան նման գոյութիւն պիտի չունենայ: Ան պիտի տեսնէ, որ հանրային կարծիքը ազգայնամոլութեամբ, ամբոխավարութեամբ եւ կրօնի վաճառականութեամբ չի կազմուիր, այլ ժողովրդավարական արժէքները հաշուի առնելով:*

*Այդ հանգրուանէն յետոյ, ժողովրդավարական արժէքները չյարգող իշխող դասակարգը, այլեւս իշխող դասակարգ ըլլալու իր յոյսերը պիտի կորսնցնէ եւ ժողովրդավարութիւնը չճանչցող պուրժուազիան իր տեղը սոցիալ դեմոկրատիային պիտի զիջի ու անոր ճամբայ պիտի բանայ:*

*Պաշտօնական պատմագրութեան կողմէ ներկայացուած հայկական ապստամբութիւնները ամբողջութեամբ պետութեան կողմէ հրահրուած սադրանքներ են: Անոնք հայերուն ինքնապաշտպանական կռիւներն էին միայն:*

*Պետական հարկերու կողքին, Քիւրտիստանի աւատապետներուն կրկնակի տուրքերուն եւ հողերու բռնագրաւման դէմ լեռ բարձրացած հայեր, իրենց վրայ եկող զինուորներուն դէմ պաշտպանութեան միջոցներ փնտռած են՝ այնպէս ինչպէս կ՚ընեն այսօր քիւրտերը: Քրտական ապստամբութիւն կոչուած շատ մը դէպքեր ասոր նման են: Տարբեր սադրանքներու դէմ եղած քրտական հակազդեցութիւնը, դարձեալ որպէս ապստամբութիւն կը ներկայացուի: Նոյնիսկ ապստամբութիւնները պատճառ չեն մարդկութեան կողմէ դատապարտուած ցեղասպանութիւն կատարելու:*

*Օսմանեան պետութիւնը Ռուսիոյ նման ժողովուրդներու բանտ մըն էր: Ան կայսերապաշտական ուժ մըն էր: Իսլամ աշխատաւորութիւնը աւատապետներուն կողմէ շահագործուած ըլլալով հանդերձ, այլազգի շահագործուողներուն հետ համեմատած, առաւելութիւններ ունեցող ժողովուրդի մը մասը կը կազմէր: Քրիստոնեաներուն եւ մովսիսականներուն վկայութիւնները դատարաններուն մէջ չէին ընդունուեր, գլխատուրք (Kelle vergisi) կը վճարէին, զէնք կրելու եւ ձի հեծնելու իրաւունքները չունէին, անոնց տուները իսլամներու տուներէն բարձր պէտք չէ ըլլար եւ այլն: Ամբողջապէս խտրական վարչակարգ մը գոյութիւն ունէր, իսկ քրիստոնեաներուն հետ եղբայրութիւն ընելու հազար տարուան սուտ քարոզչութիւնը եղած անարդարութիւններուն բնական իրավիճակ մը տալ կը միտէր միայն:*

*Այս իրավիճակին դէմ բողոքելուն անունը ապստամբութիւն էր:*

*Ազգային շարժումներուն հիմքը եղած է պուրժուազիային սեփական շուկայ մը գտնելու ցանկութիւնը: Սակայն հայերուն կազմակերպուածութեան հիմնական ուժը պուրժուազիան եւ անոր ցանկութիւնները չէին, այլ՝ յառաջադիմական մարդոց եւ ընչազուրկներու միացեալ ցանկութիւնները:*

*Օսմանեան Կայսրութեան մէջ հայկական երեք կազմակերպութիւններէն՝ մէկը ազատական էր, իսկ միւս երկուքը ընկերվարական բնոյթի էին: Հնչակեան Կուսակցութիւնը ինքզինքը մարքսիստ կը ծանօթացնէր եւ երկրորդ ինտերնացիոնալի անդամ էր: Դաշնակցութիւնն ալ երկրորդ ինտերնացիոնալի անդամ էր:*

*Ասոնց յայտարարութեան մէջ Ժան Ժորէս կը գրէ. «Դաշնակցութիւն կուսակցութիւնը 1911-ին առած իր որոշումներուն մէջ կը յայտարարէ թէ պուրժուաներուն անդամակցութիւնը Կուսակցութեան հակոտնեայ է իր ծրագրին»: 1885-ին Վանի մէջ հիմնուած Արմենականները ազատական-ժողովրդավարական կուսակցութիւն մըն է:*

*Հայկական Հարցի լուծումը, մեր սպաննած մարդոց որբացած զաւակներուն մտահոգութիւնը փարատելով կ՚ըլլայ: Այս հարցով Թուրքիոյ Հանրապետութիւնը սակարկելու բան մը չունի:*

*Օսմանեան Կայսրութեան կողմէ կատարուած ցեղասպանութիւնը պէտք է ընդունուի առանց ոչ մէկ «սակայն»ի: Թուրքիոյ կողմէ ճանաչումը չի նշանակեր պատասխանատուութենէ խուսափում: Սակայն, ան Օսմանեան Կայսրութեան կատարած աղէտէն ձերբազատուելու կապակցութեամբ բան մը ըրած չըլլալու կողքին, շարունակած է ազգայնամոլական քաղաքականութիւնը, արդարացնելով եղածները եւ տարբեր ձեւերով շարունակելով «ոչ իսլամ»ներու ոչնչացումը, որոնք մեր ուսերուն վրայ ծանրացած բեռ կը մնան:*

*ա) Փոխ առնուած ժառանգութիւնը շարունակուեցաւ Թուրքիոյ Հանրապետութեան կողմէ վարած քաղաքականութիւններով, հետեւաբար, ան պէտք է ներողութիւն խնդրէ Ցեղասպանութեան ենթարկուած տարբեր ժողովուրդներէն ինչպէս նաեւ հայերէն:*

*բ) Բոլոր անոնք, որոնք այսօրուան Թուրքիոյ Հանրապետութիւնը կազմող հողերուն վրայ ապրած են եւ բռնագաղթի ու կոտորածի հետեւանքով ոչնչացուած, պէտք է ճանչցուին Թուրքիոյ հանրապետութեան քաղաքացիներ, եւ այս քաղաքացիութեան իրաւունքը պէտք է ի զօրու ըլլայ նաեւ անոնց զաւակներուն:*

*գ) Այս ընդունման կողքին, այդ քաղաքացիներէն բռնագրաւուած ունեցուածքները եւ իրաւունքները պէտք է ետ վերադարձուին:*

*դ) Ցեղասպանութեան փաստը վիճելի կողմ մը չունենալով հանդերձ, պատմական ճշմարտութիւնները Թուրք եւ քիւրտ ժողովուրդներուն միտքը հանգստացնող (tatmin) երաշխիքներ պէտք է ըլլան:*

*Անկողմնակալ եւ ժողովրդավար ձեւով պէտք է կազմուի իրականութիւնները բացայայտող վաւերական յանձնախումբ մը:*

*Յանձնախումբին պէտք է տրուի բաւականաչափ ժամանակ ճշմարտութիւնները յայտնաբերելու եւ զանոնք հանրային կարծիքին ներկայացնելու համար, նոր պատմութեամբ մը, նոր պատմական գիտակցութիւն մը պէտք է ստեղծուի:*

*Թուրքիոյ եւ Հայաստանի Հանրապետութիւններուն մէջ ապրող ժողովուրդներուն միջեւ գոյութիւն ունեցող խորթ զգացումներու վերացման, թշնամութիւններուն եւ նեղսրտութիւններուն մաքրման եւ անոնց կրկնութիւնը կանխարգիլելու համար, երկու ժողովուրդներու միջեւ ոչ թէ մրցակցային, այլ գործակցութեան դաշտեր պէտք է ստեղծուին: Սահմանները պէտք է բացուին եւ Հայաստանին պէտք է տրուի դրական առանձնաշնորհում մը, որպէսզի Հայաստանի կենսամակարդակը հասնի Թուրքիոյ միջին կենսամակարդակին:*

*Թրքերէնէ թարգմանեց՝*
*ԱԼԵՔՍԱՆ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ*

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

## ԱՅՍՕՐ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻՆ ՀԵՏ

*Շարունակուած էջ 13-էն*

*արդարեւ, եթէ մէկ հատուածը թրքական սրածութենէն ճողոպրածներու շառաւիղներն են, հարկադրեալ հայրենազրկուածներ, ապա միւս կարեւոր հատուածը հայրենիքը կամաւոր լքած թուլամորթներ են՝ այլոց հողն ու տունը բարեզարդող:*

*Ի հարկէ, Պարոյր Սեւակ քաջածանօթ էր հայոց պատմութեան. դրական երեւոյթներու կողքին՝ ժխտականներուն անդրադառնալով իր մատը կը տեղադրէ ճիշդ վէրքին վրայ. կը կատարէ ախտաճանաչում ու դիպուկ քննադատութիւններ՝ անշուշտ սրտցաւօրէն: Այս առումով, ան կը ձաղկէ անիշխանութիւնը, բազմագլխութիւնը, կեդրոնախոյս տարրերը եւ կեդրոնաձիգ ուժին դէմ յումպէտս եղբայրասպան մրցակցութիւնները: Ան ունի նշանակալից եւ հիմնարար գործ մը՝ «Եռաձայն Պատարագ» անունով. 1965-ին գրուած այս երկարաշունչ բանաստեղծութիւնը կը բաղկանայ երեք մասերէ՝ «Ողբամ Մեռելոց», «Բեկանեմ Շանթեր», «Գոչեմ Ապրողաց»: Այս գործը կարելի է բնորոշել որպէս ամփոփ հայոց պատմութիւն. խտացեալ մեր պատմական անցեալն է ան՝ սիրտի գեղումով, պատմական ճշմարտութիւններով եւ յուզաթաթաւ ոգիով գրուած: Ան ինչպէ՜ս կը գայրանայ մեր հայրենիքին անիշխանական կացութեան դէմ.*

Եւ ոսկրով ծածկուեց մի հսկայ երկիր, ուր (ճիշդ են ասել ու ճիշդ եմ ասում) եղել էր ու կար շնից շատ իշխան, բայց իշխանութիւն չի՛ եղել երբե՛ք.

*Շուներէ շատ իշխանները եթէ օտարներուն կ՚ակնարկէ, ապա նաեւ կը վերաբերի հայոց պառակտումի եւ երկփեղկումի ախտին. ազգակործան վարակին: Միթէ՞ նոյնը չէ այսօր. ե՞րբ պիտի ունենանք բոլորին կողմէ յարգուած ու բոլորին կողմէ ընդունուած իշխանութիւն: Ահա անոր ցաւը. նաե՛ւ մերօրեայ ցաւը հայ կեանքին: Շուներէ շատ իշխաններ ունենալու անոր վերյիշեցումը մեր անմիաբանութեան դէմ ուղղուած խարազանում մը չէ՞ արդեօք:*

*Ան կ՚ողբայ հայու ճակատագիրին վրայ, երբ անցեալին հաց կը բաժնէր, այլոց կը կերակրէր ու բարիք կ՚արտադրէր, եւ օր մը պիտի դառնար հացի կարօտ. հայ գաղթականի, տարագրեալի եւ հայրենահանի ողբալի կացութեան անդրադարձն է «Եռաձայն Պատարագ»-էն սա կիզող խօսքերը.*

Եւ մի ժողովո՛ւրդ որ հացն էր պաշտում՝ նշխարի տեսքով, մնում էր ահա առա՛նց նշխարի…

Եւ մի ժողովո՛ւրդ, որ իր գոյութեամբ հանապազօրեայ հաց էր միշտ եղել մի հսկայական կայսրութեա՛ն համար, մի ո՛ղջ ժողովուրդ մնում էր հիմա հանապազօրեայ հացի՛ կարօտով…

*Կեանքի եւ պատմութեան ինչպիսի՜ անախորժ թաւալք, որ հացապաշտ, աշխատասէր, ճակտի քրտինքին ապաւինած հայ մարդը, օր մը պիտի դառնար հացակարօտ խլեակ, սա կամ նա վաչկատունին խղճահարութեան ենթակայ, արաբ պետեւիին քմահաճոյքին զոհ՝ Տէր Զօրի անապատէն մինչեւ որբանոցներու եւ գաղթակայաններու այն կեդրոնները, ուր հայ որբուկներ ու տարագիրներ ծուարեցան՝ Լիբանանէն Սուրիա, Յունաստանէն Պուլկարիա ու Ֆրանսա մինչեւ Ռուսաստան եւ այլուրեք:*

*Կը տառապի բանաստեղծը ի տես իր բանող ժողովուրդին ուղեկորոյս ու նպաստընկալ իրավիճակին:*

*Հասկնալի է, որ Պարոյր Սեւակի ողջ գրականութիւնը, գրական ժառանգը, բառագիտական հմտութիւնները, լեզուամտածողութիւնն ու սերունդներուն կտակած ցուցմունքները անհնար է ներկայացնել մէկ յօդուածով: Կը բաւէ, որ «Սարդարապատ», «Երեւան-Էրեբունի» եւ «Արփա-Սեւան» երգերը յաճախ կը հնչեն Պ. Սեւակի բառերով՝ անմահութեան դափնեպսակ պարգեւելով մեծանուն գրողին: Հայ ժողովուրդը իր սիրտին, գոգին ու հոգիին մէջ ամփոփելով Պ. Սեւակի անմեռ յիշատակը, ինքնըստինքեան, մշտավառ լուսապսակ տեղադրած կ՚ըլլայ անոր սէգ ու պայծառ ճակատին:*

*Վարձքդ կատար անմահանուն Պարոյր Սեւակ:*

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

## ԳՐՈՂԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*Ո՛չ:*

*Նախ, ես միշտ փորձել եմ անել լաւագոյնը, այնպէս, ինչպէս ես եմ հասկանում փորձելը: Երկրորդ, կարծում եմ՝ ես միշտ էլ խելամիտ եմ եղել:*

*Յետոյ, ի՞նչ կ՚ասեմ որոշ քննադատների եւ ընթերցողների այն տեսութեան մասին, թէ իմ գրածը ռեալիստական չէ ու սենտիմենտալ է:*

*Դէ, ես կարծում եմ՝ նրանք սխալւում են: Այն գրուածքում, որը տպաւորիչ է, ես չեմ կարծում՝ որեւէ բան ոչ ռէալիստական է: Ինչ վերաբերում է իմ սեփական գրուածքին, կարծում եմ՝ այն միշտ ռէալիստական է եղել իր էութեամբ, եթէ ոչ արտաքին ձեւով նաեւ: Կարծում եմ՝ իմ գրուածքը սենտիմենտալ չէ, թէպէտ մարդ արարած լինելն ինքնին շատ սենտիմենտալ է:*

*Երբ գրում եմ, վերադառնում եմ Սան Ֆրանսիսքօ, որտեղ ապրում էի, երբ հրատարակուեց իմ առաջին գիրքը, եւ որտեղ արդէն վեց-եօթ տարի չէի ապրում, եւ օրը Հոկտեմբերի տասներէքն է: Երկու օր առաջ Մալիպուից մեքենայով եկայ այստեղ, որ տասը-տասնմէկ օր մնամ, մինչեւ ծովափնեայ իմ տունը ներս ու դրսից ներկեն: Ես չեմ եկել Սան Ֆրանսիսքօ, որպէսզի այստեղ լինեմ իմ առաջին գրքի հրատարակութեան քսանամեակի առթիւ, այնուհանդերձ, ես այստեղ կը լինեմ այդ օրը:*

*Արդէն հասցրել եմ գլօսնել Սան Ֆրանսիսքոյի մերձակայքում գտնուող իմ ճանաչած բոլոր վայրերում, որպէսզի կրկին տեսնեմ այն տները, որտեղ ապրել եմ: «Քարլ Սթրիթ, 348», «Դիվիզադերօ, 1707», «Սաթըր, 2378», «Նաթոմա, 123». եղել եմ նաեւ ամենատարբեր վայրերում, որտեղ աշխատել եմ նախքան ազգային ամսագրում պատմուածքիս տպագրուելը. Փոստահեռագրային ընկերութեան զանազան մասնաճիւղային գրասենեակներում՝ Մարքիթ Սթրիթում գտնուող «Փալիս Հոթել Բիլդինգում», Փաուէլ Սթրիթում գտնուող «Մարքիթում», Թէյլորում գտնուող Գոուլդըն Գէյթ Թիըթր Բիլդինգի «Մարքիթում» եւ «Երրորդի» կողքին գտնուող «Բրանան, 405»-ում:*

*Առաջին երեք գրասենեակներում գործավար ու ռատիոհեռագրիչ եմ աշխատել, իսկ «Բրանանում» արդէն գրասենեակի վարիչ էի: Ես միշտ հպարտացել եմ դրանով, քանի որ Ամերիկայի Փոստահեռագրային ընկերութեան մասնաճիւղային գրասենեակի ամենաերիտասարդ վարիչն էի. տասնինը տարեկան եւ առանց աւագ դպրոցի դիպլոմի:*

*Երէկ ես քայլեցի «Քրիսմըլ Փալիս Մարքիթով» եւ այցելեցի «Ֆիորէ դ՚Իտալիա» կոչուող այն կրպակը, որտեղ մի ժամանակ կարտոֆիլ ու լոլիկ էի կրում:*

*Ես մտայ «Մարքիթում» եւ «Վեցերորդում» գտնուող շէնքերը, որտեղ տեղակայուած են «Նոճիների Մարգագետնի Գերեզմանային Ընկերութեան» գրասենեակները: Այնտեղ էլ եմ աշխատել:*

*Փոխնախագահը հարցրել էր. «Դուք մտադիր էք «Նոճիների Մարգագետինը» դարձնել ձեր ողջ կեանքի գործունէութի՞ւնը»:*

*Ես ասել էի՝ այո՛, պարոն:*

*Եւ ստացել էի աշխատանքը:*

*Մի ամիս յետոյ հեռացայ այնտեղից, բայց այդ աշխատանքն արժէքաւոր փորձառութիւն էր ինձ համար: Յիշում եմ, թէ ինչպէս Ծննդեան տօներից մէկ շաբաթ առաջ փոխնախագահը դառնագին գանգատուեց, որ գրիպի համաճարակի բացակայութեան պատճառով ընկերութեան գործունէութեան ծաւալը Դեկտեմբեր ամսուայ ընթացքում 22 տոկոսով կրճատուել էր՝ նախորդ տարուայ համեմատ:*

*Ես նշեցի. «Բայց, ի վերջոյ, բոլորը կը վարակուեն, այնպէս չէ՞»:*

*Փոխնախագահն ակնոցը բարձրացրեց քթի կամրջակից ու դրեց ճակատին, որպէսզի մէկ անգամ էլ նայի ինձ:*

*«Ես գրող եմ, - ասացի, - դեռ անտիպ»:*

*Նա ինձ խնդրեց նայել որոշ լոզունգների, որ ինքն էր ստեղծել ընկերութեան համար. «Inter here. A lot for your money»1:*

*Ես ասացի, որ նա հոտառութիւն ունէր:*

*Ոտքով անցայ էմբարկադերոյով ու հասայ «Դոդդ Ուէըրհաուս», կտրեցի անցայ «Փիեր, 17»-ը, քանի որ այնտեղ էլ եմ մի ամիս աշխատել: Այդ աշխատանքի հետ կապուած միակ խնդիրն այն էր, որ ամէն կէսօրեայ նախաճաշին նաւահանգստային բեռնակիրները հաւաքւում ու զառ էին խաղում դատարկ, բաց վագոնում կամ նաւանորոգարանի հսկայակոյտ անտառանիւթի ետնամասում: Իմ շաբաթական կանխիկ եկամուտը չնչին էր, թէպէտ ես ընկերացայ Դաֆբելի անունով մեծն նեգր զառ խաղացողի եւ խաղի կազմակերպչի հետ: Այդ հեռաւոր կէսօրեայ զառախաղերի ընթացքում ծովեզերքին իջնող արեւալոյսը հիասքանչ էր, ու երբ երէկ գնացի այնտեղ, աչքիս առաջ յառնեց այն հսկայամարմին ծերունին, որ խաղի թուերն էր կանչում, ու ես յիշեցի. երբ նա նկատում էր, որ ես խաղագումար չեմ դնում, ճշգրտօրէն կռահում էր, որ միջոցներս սպառուել են, ուստի աննկատ ձեռքս էր խոթում մէկ-երկու արծաթադրամ, որպէսզի կրկին խաղի մէջ մտնեմ:*

*Մի անգամ, երբ երեք օր շարունակ ինձ հեռու պահեցի խաղից՝ յոյս ունենալով շաբաթ օրուայ երեկոյի համար գրպանումս մի քանի տոլար ունենալ, Դաֆբելին ում տեսել, հարցրել էր. «Ո՞ւր է կորել էդ դժոխքի բաժին հայը»2:*

*Ես, «Դոդդ Ուէըրհաուսում» նստած, սենդուիչներ էի ուտում եւ Ջեք Լոնդոն կարդում. ահա թէ որտեղ էի:*

********

1. Կրկնակի ենթատեքստով երգիծական բառախաղ է օգտագործուած. «Հողին յանձնէք այստեղ: Հողատարածք (նաեւ՝ վիճակահանութիւն) Ձեր փողի դիմաց», (բոլոր ծանօթ.՝ թարգմանչի – Դ.Հ.):

2. "Abyssinian boy" – "Abyss" + "sin" + "Armenian" – «դժոխք» + «մեղք» + «հայ» բառերի վանկային համակցումից ստեղծուած նորակազմութիւն:

*(Շարունակելի)*

*Անգլերէնից թարգմանեց՝*
*ԴԻԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԸ*

**www.massisweekly.com**

## ՄԱՀԱԶԴ



***ԲԻՒԶԱՆԴ ՔԷՅՎԱՆԵԱՆ***
*(Ծնեալ՝ 1935ին, Հալէպ, Սուրիա)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր, աներոջ, մօրեղբօր, հօրեղբօր եւ հարազատին՝ **ԲԻՒԶԱՆԴ ՔԷՅՎԱՆԵԱՆ**ի անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, Յունուար 26, 2014ին, Լիբանանի մէջ:*

*Յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնները կատարուեցան Ուրբաթ, Յունուար 31, 2014ին, Լիբանանի մէջ:*

*Հանգուցեալին հոգւոյն յատուկ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Փետրուար 9, 2014, կէսօրէն ետք ժամը 2ին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, 5300 White Oak Ave., Encino, CA 91316:*

*Սգակիրներ՝*
*Այրին՝ Ռենա Քէյվանեան եւ դուստրը՝ Քեթի (Լիբանան)*
*Զաւակները՝ Սարգիս եւ Քարլա Քէյվանեան եւ զաւակները (Լիբանան) Վաչէ եւ Աննա Քէյվանեան եւ զաւակները*
*Նեպիլ եւ Պեթի Քէյվանեան-Ազզուզ եւ զաւակները (Ֆրանսա)*
*Քոյրերը՝ Անժէլ եւ Բիւզանդ Տէր Գրիգորեան եւ զաւակները Ալիս եւ Յակոբ Սարաֆեան*
*Եւ համայն Քէյվանեան, Թերզեան (Լիբանան), Մուպայեաճեան (Լիբանան), Նարպեկեան, Ազզուզ (Լիբանան), Շահինեան, Տէր Գրիգորեան, Պօրուճեան, Գազեզեան, Բագլայեան, Հինտոյեան, Տաղլեան, Գլըճեան ընտանիքներն ու հարազատները:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

***ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ** մահուան տխուր առիթով Հիւսիսային Ամերիկայի Ս.Դ.Հ.Կ.ի Վարիչ Մարմինը իրենց խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի բոլոր պարագաներուն, յատկապէս Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական Վարիչութեան ատենապետ Տէր եւ Տիկ. Ընկ. Յակոբ Տիգրանեանին:*

## ՄԱՀԱԶԴ



***ԵՂՍԱ ԷԼԻԶԱՊԷԹ ՃԻԼԵԱՆ***
*(1926-2014)*

*Սրտի դառն կիսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ մօր եւ մեծ մօր եւ քրոջ՝ **ԵՂՍԱ ԷԼԻԶԱՊԷԹ ՃԻԼԵԱՆ**ի մահը, որ պատահեցաւ Կիրակի, 2 Փետրուար, 2014, յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Հանգուցեալի թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 10 Փետրուար, 2014ին, կէսօրէ ետք ժամը 1:30ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107: Գերեզմանի կարգը պիտի կատարուի Mountain View գերեզմանատան մէջ, 2400 North Fair Oaks Avenue, Altadena, CA 91001:*

*Սգակիրներ՝*
*Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Սոնա Ճիլեան եւ զաւակները*
*Դուստրերը՝*
*Տէր եւ Տիկ. Սամուէլ եւ Ռոզ Նասանեան*
*Տէր եւ Տիկ. Վարդան եւ Սիւզան Թասմաճեան եւ զաւակները*
*Տիկ. Սիլվա Ռուսեան եւ զաւակները*
*Թոռները՝*
*Հրակ Նասանեան եւ Նիա Ուայպորկ*
*Տէր եւ Տիկ. Արի եւ Հուրիկ Մանուկեան*
*Տէր եւ Տիկ. Ճէք եւ Էլիսա Փիլաւեան*
*Քոյրը՝*
*Տէր եւ Տիկ. Միհրան եւ Ովսաննա Մուրատեան (Թրոյ, Նիւ Եորք)*
*եւ համայն Եահնիյեան, Նիկողոսեան, Տէրեան, Մաթոսեան, Պահլուլեան, Նալպանտեան, Նասանեան, Թասմաճեան, Ռուսեան, Փիլաւեան եւ Գլըճեան ընտանիքներ:*

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները հանեցէք կատարել Սուրիահայերու ֆոնտին:

## ՀԱՅԸ

*Շարունակուած էջ 15-էն*

*չափ. կամացուկ մը «մնաս բարով» կ'ըսէ իր մշակոյթին՝ վերէն նայելով անոր վրայ, ու կը բռնէ այլասերման նրբուղին: Հայուն իրապէս իր ցեղին կապուած ըլլալը այն ատեն միայն կը հասկցուի, երբ ան, օտար տարածուն լեզու մը գիտնալով հանդերձ, չի հեռանար Մեսրոպին աննման գիրերէն:*

*

*Հայուն մէջ երկու հոգի կայ՝ վախկոտ մը եւ քաջ մը, կամ ստրուկ մը եւ հերոս մը: Ամէն ազգի մէջ վախկոտը կը կծկուի քաջին ետեւը. ընդհակառակն է Հայուն մէջ. քաջը կը գտնուի վախկոտին տակը: Ամէն բռնակալ կրնայ իր առաջին հոգին հանել: Հանե՞ց. սոսկալի է հրաշքը: Կը ցցուի պահեստի հոգին՝ խենթի նման: Ու կը զարնէ: Եւ իր հարուածը անսխալական է Պապին պէս:*

*Երբ վտանգի օրերը անցնին, Հայը կը մեռցնէ իր մէջի հերոսը ու վախկոտին հետ քաջաբար չուկայ կ'իջնէ՝ գրաւելու՛ համար Ոսկեբերդ մը:*

*

*Օտարներէն ոմանք կ'ըսեն, թէ առեւտուրի մէջ մէկ Հայ կրնայ խաբել երեք Իսրայելացի: Իրենց ըսածը հաստատելու համար, սակայն, երեք հրեայ չեն կրնար ճարել՝ իբր սուտ վկայ: Ու մանաւանդ կը մոռնան, որ քաղաքականութեան մէջ բաւական է եւրոպացի շոշորթ մը՝ խաբելու համար ամբողջ հայութիւնը: Հայը, որ շէնցնող է, որ կը շինէ ոչ միայն իրը այլ եւ ուրիշներունը, անշուշտ, ունի վաճառականական տաղանդ. սակայն իր այդ ճարպիկութիւնը սկսած է այն տեղէն, ուր դադար մը առած է աշխարհի քաղաքական խարդաւանքը:*

*Աշխարհը ընդգրկող խաբէութեան մանեակ մը կայ: Ծշդենք անոր վրայ Հայուն տեղը: Հայը այդ խաբէութեան մանեակին մէջտեղէն կախուած մըն է: Կախուած է՝ իբր խաչեցեալ ու Միսիին պէս, չէ կրցած միւռոնե՛լ խաչագողի երեսը՝ քրիստոնեայ աշխարհին:*

## ՓՈՂԿԱՊԸ ԿԸ ԽՕՍԻ

*Շարունակուած էջ 16-էն*

*եւ նուիրուածութիւն գերադասող տղամարդիկ: Անոնց համար աշխատանքը վեր է ընտանիքէն:*

*Փողկապի վրայի խիստ գիծերը կ'օգնեն զայն կրողին արագ կեդրոնանալու. պատահական չէ, որ գիծերով փողկապ կրողները յաջողակ գործարարներ են:*

*Ծաղիկներով փողկապ*

*Այս փողկապով տղամարդը ռոմանթիկ եւ բարեհոգի է. կը ղեկավարուի զգացումներով եւ ոչ թէ բանականութեամբ: Ան հակուած է ներդաշնակութեան եւ կը շրջանցէ տհաճութիւնները:*

*Նախշերով փողկապ*

*Վանդակաւոր փողկապով տղամարդը յուսալի գործընկեր է, անոր կարելի է եւ պէտք է վստահիլ. կատակասիրութիւնն ու երեւակայութիւնը անբաժանելի են իրմէ. գրեթէ ոչ մէկ հանգամանքի մէջ ան չի կորսնցներ հաւասարակշռութիւնը:*

*Ըստ հոգեբաններու՝ կատակասիրութեան զգացողութեամբ, ինքնավստահ տղամարդիկ կը գերադասեն վառ նախշերով, «ճչացող» պատկերներով փողկապներ:*

*Միագոյն փողկապներ*

*Մոխրագոյն եւ սեւ փողկապներ կ'ընտրեն «անգոյն» տղամարդիկ, որոնք ամէն ինչի մէջ կը սիրեն կարգ ու կանոն, կը հետեւին օրէնքներուն, ամէնուր կը ձգտին ըլլալ «ճիշդ», որմով ալ կը ջղայնացնեն իրենց զուգընկերուհիները: Բաց միագոյն փողկապները կը վկայեն ճաշակի բացակայութեան մասին, իսկ եթէ վերնաշապիկը գոց գոյն է փողկապէն, ուստի կրողը աչքի կը զարնէ յարձակողականութեամբ:*

*Փողկապի կապոյտը կը խորհրդանշէ յուսալիութիւն, մարդամօտութիւն, ընկերասիրութիւն: Վառ կարմիրի գերակշռութիւնը կը զուգորդուի տիրոջ խանդավառ բնաւորութեան հետ, որ կը ձգտի փառքի: Բաց կանաչը կը խտացնէ կրողին բարձր պահանջքները շրջապատի նկատմամբ: Կանայք, որոնք կը փափաքին «պարուրուիլ» ընտանեկան ջերմութեան մէջ, պէտք է ուշադրութիւն դարձնեն մուգ կանաչ եւ ձիթապտղագոյն փողկապ կրող տղամարդոց վրայ:*

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave   Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ՀԱՅԵՐԷՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*գալի համար մենք ստեղծած պիտի ըլլանք ընթերցասէր գլխագիր Մարդիկ:*

### Հայերէն Լեզուի Երկուութեան Հարցը

*Հայ փոքրիկներուն համար հայերէն ընթերցանութիւնը ունի իր դժուարութիւնները: Սփիւռքահայ (արեւմտահայ) փոքրիկները, որոնց բացարձակ մեծամասնութիւնը արդէն իսկ արեւելահայ գրականութիւն ընթերցելու անկարելիութեան առջեւ կը գտնուի, ունին նաեւ այլ շատ կարեւոր դժուարութիւն մը, որն է՝ այն հսկայ տարբերութիւնը որ կայ այսօր սփիւռքահայ տան խօսակցական լեզուին եւ սփիւռքահայ գրական լեզուին մէջ: Այս իրավիճակը լուրջ պարագայ մըն է, որ հեղինակները, մանաւանդ փոքրիկներու գրականութեամբ զբաղող հեղինակները պէտք է մղէ պարզացնելու իրենց գործածած գրական լեզուն, բառերն ու ոճը, որպէսզի ընկալելի ըլլան փոքրիկ ընթերցողին կողմէ: Ընթերցողները իրենց փորձառութենէն գիտեն, թէ երբ կը կարդան բան մը որ լաւ չեն հասկնար, այս մէկը կ՚առաջնորդէ զրկուածութեան զգացումին (frustration), հետեւաբար՝ գիրքը մէկ կողմ նետելու փորձութեան: Արդէն իսկ գոյութիւն ունեցող լեզուական դժուարութիւններուն վրայ՝ պէտք է աւելցնել նաեւ Հայերէն լեզուի ուսուցման ձեւն եւ միջոցները, Հայերէն լեզուի դպրոցական ծրագիրներու եւ դասագիրքերու, այլ լեզուներու գիրքերու հետ համեմատած, անհրապուրիչ, ժամանակավրէպ եւ աղքատ որակով ըլլալու փաստը, որոնք բնաւ չեն գոհացներ Հայ աշակերտին ընկերային, մտային եւ դաստիարակչական պէտքերը: Վերոյիշեալ տխուր իրականութիւնը աւելի եւս վանողական կը դարձնէ ընթերցասիրութիւնը Հայ աշակերտին մօտ:*

### Լուծումներու Առաջարկներ

*Որեւէ հարցի արմատական լուծումը՝ կարիքն ունի գիտական լուրջ ուսումնասիրութեան, բան մը որ դժբախտաբար կը պակսի մեր ժողովուրդին մօտ, ուր ընդհանրապէս լուծումներ կը փորձենք գտնել շատ յաճախ հիմնուելով մեր ողջմտութեան (common sense) վրայ, որ կրնայ դժբախտաբար զուրկ ըլլալ գիտական հիմքէ: Լուծումներու որոնումի ճամբուն վրայ՝ գիտական ուսումնասիրութիւններ պէտք են հետեւեալ կէտերուն մէջ. ա.- Մասնագէտներու կողմէ կատարուելիք խորունկ ուսումնասիրութիւն մը, արժեւորելու համար գոյութիւն ունեցող Հայերէն լեզուի դպրոցական ծրագիրներն ու գիրքերը, մասնաւորաբար մանկապարտէզի եւ նախակրթարանի մէջ: բ.- Դպրոցներուն մէջ գործադրուող ընթերցանութեան դասապահերու քննութիւն գ.- Սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող մանկապատանեկան հրատարակութիւններու վերարժեւորում եւ զարգացում: դ.- Ուսումնասիրութիւն՝ տուներու մէջ ընթերցանութեան հետ կապուած մթնոլորտին: Վերոյիշեալ աշխատանքներուն հետ զուգահեռ եւ հիմնուելով անոնցմէ բխող արդիւնքներուն վրայ, պէտք է կազմակերպել ծրագրուած վարժանիստեր (workshops) ուղղուած՝ ծնողներուն, ուսուցիչ-ուսուցչուհիներուն, գրադարանապետերուն եւ փոքրիկներուն հետ աշխատող այլ անհատներուն: Երբ փոքրիկները կու գան ընթերցասիրութեան մթնոլորտէ զուրկ տուներէ, անոնց գրաճանաչումի եւ ընթերցասիրութեան ծանօթանալու առիթը պիտի յետաձգուի մինչեւ իրենց դպրոց մուտք գործելը, ուր դարձեալ շատ մը պարագաներուն՝ հարցական կը մնայ այս ուղղութեամբ կատարուող ճշգրիտ աշխատանքը: Հետեւաբար՝ մանուկը զրկուած պիտի ըլլայ գիրն ու գիրքը սիրելու առիթէն, իր կեանքի սկզբնական շատ կարեւոր տարիներուն: Եթէ կ՚ուզենք բարեփոխել այս տխուր իրավիճակը եւ մանուկին առիթը տալ լաւագոյնս օգտուելու ընթերցասիրութեան կապուելու այդ շատ կենսական տարիներէն, հիմնական փոփոխութիւններու պէտք է ձեռնարկենք եւ փորձենք ծնողներն ու ուսուցիչ-ուսուցչուհիները ուսուցանել եւ մարզել այդ ուղղութեամբ: Անոնց պէտք է տրուին բոլոր կարեւոր տեղեկութիւններն ու ռազմավարական միջոցները, որպէսզի կարողանան զանոնք ի գործ դնել՝ ընթերցասէր սերունդներ պատրաստելու համար:*

*1.- Ծնողներու ուղղուած վարժանիստերը պէտք է նկատի ունենան հետեւեալ կէտերը. ա.- Կենսական գիտելիքներ փոխանցել ծնողներուն, իրենց փոքրիկներուն ճիշդ լեզուամտածողութիւն սորվեցնելու: բ.- Ուսուցանել ծնողներուն, թէ կարդալը կը սկսի մանուկին ծնունդէն եւ թէ որքա՜ն կարեւոր է պատմութիւններ կարդալ փոքրիկներուն: գ.- Ընթերցանութեան ի՞նչ նիւթեր ընտրել: դ.- Ի՞նչպէս կարդալ փոքրիկներուն: ե.- Ո՞ւր եւ ե՞րբ կարդալ փոքրիկներուն: զ.- Ի՞նչպէս քաջալերել փոքրիկները որ իրենց միտքերը գրելով եւ գծելով արտայայտեն: է.- Ի՞նչպէս փոքրիկներուն հետ խաղալու ժամանակ տրամադրել, որ մեծ նպաստ կը բերէ զարգացնելու անոնց լեզուկան եւ հաղորդակցութեան կարելիութիւնները: 2.- Ուսուցիչ-ուսուցչուհիներուն ուղղուած վարժանիստերը պէտք է նկատի ունենան հետեւեալ կէտերը.- ա.- Ստեղծել եւ գործածել Հայերէն դասագիրքի յարակից (supplementary) ընթերցանութեան գրքոյկներ, եւ այլ միջոցներ՝ մանկապարտէզի եւ նախակրթարանի մակարդակի յարմար: բ.- Ստեղծել, զարգացնել եւ գործածել ժամանակակից գրականութիւն, որուն մէջ մեծ տեղ կը գրաւեն փոքրիկին ընկերային եւ զգացական ձիրքերը եւ իր քննադատական մտածողութիւնը (critical tհinking) զարգացնող նիւթեր: գ.- Զըլլալ դասարանին խօսակցութեանց առանցքը, այլ թոյլ տալ փոքրիկներուն, որ ազատօրէն արտայայտեն իրենց միտքերը եւ քաջալերել զանոնք: դ.- Փոքրիկներուն կողմէ շատ սիրուած թատրոնն ու խամաճիկը օգտագործել, ներ-մուծելով զայն դաստիարակչական աշխատանքին մէջ: Ան իր ուղղակի ներդրումը ունի փոքրիկին ընթերցասիրութեան մէջ երբ մանաւանդ իրենց տրամադրուին իրենց տեսած խամաճիկի կամ թատրոնի նիւթին գրքոյկները: ե.- Սորվեցնել մշակոյթի ընդմէջէն, այսինքն՝ գործածել նկարչութիւն, երգ, ձայներիզ ու տեսաերիզ որոնց ճիշդ օգտագործումը դարձեալ կը նպաստէ փոքրիկին, զայն քաջալերելով գրելու եւ կարդալու իր տեսածն ու լսածը: զ.- Ուսուցիչ-ուսուցչուհիները օժտել վերոյիշեալ կէտերուն գործադրութիւնը ուսուցանող եւ ցուցմունքներ տուող գիրքերով եւ աղբիւրներով:*

*Գիրքերու գոյութիւնը մեծապէս կախեալ է անոնց ստեղծած պահանջքէն: Տարիքային խումբերու հետ յարմարող Հայերէն լեզուով գրուած քաշողական եւ հետաքրքրական գիրքերու չգոյութիւնը իր ժխտական ազդեցութիւնը ունի հայերէն ընթերցասիրութեան զարգացումին վրայ: Միութենական թէ անհատական հրատարակչատուներն ու հեղինակները պէտք է նկատի ունենան այս պարագան: Գիրք ստեղծելէ աւելի կարեւոր է՝ ճի՛շդ գրականութիւն ստեղծելը: Լաւ կ՚ըլլայ օգտուիլ արեւմտեան աշխարհին այս դաշտին մէջ կատարած փորձէն եւ անոնց հրապուրիչ ու օգտակար մանկական հրատա-րակութիւններէն: Ապա թէ ոչ՝ Հայերէն գիրքերուն մեծամասնութիւնը պիտի հրատարակուի հրատարակուելու սիրոյն եւ ի զուր պիտի երթան անոր համար տրամադրած մարդոյժը, ժամանակը եւ մանաւանդ նիւթականը:*

*Մերօրեայ փոքրիկներուն ուղղուած գրականութիւնը պէտք է արտացոլացնէ անոնց ժամանակակից ընկերային, մտային եւ մշակութային պէտքերը: Իսկ նիւթերը ըլլան իմաստալից եւ օգտաշատ եւ անդրադառնան մերօրեայ կարեւոր ընկերային արժէքներուն, ինչպէս՝ գործակցութեան ոգի, ծագած հարցերու խաղաղ լուծում, պատասխանատուութեան գիտակցութիւն, համդուրժողականութիւն, եւայլն:*

*Ամենակարեւորը՝ լեզուն պէտք է ըլլայ հասկնալի, որպէսզի դիւրացնէ փոքրիկին իր կարդացած գիրքէն ընկալած տեղեկութիւնները իր հերթին օգտագործելու իր ամէնօրեայ խօսակցութեան, մտածելակերպին եւ վարուելակերպին մէջ: Գանք այլ կենսական հարցի մը. հրատարակութեամբ զբաղող կողմերը պէտք է լաւատեղեակ ըլլան վաճառունակումի (marketing) բոլոր միջոցներուն եւ գիտելիքներուն, ամէն առիթով գործի դնելով զանոնք:*

### Իսկ Ո՞վ Պիտի Ընէ Այս Բոլորը

*Պատասխանելու համար այս հարցին, նախ պիտի շեշտեմ թէ կարենալու համար ունենալ յարաճուն եւ շարունակական մարդկային զարգացում (Sustainable հuman Development), ազգ մը կարիքն ունի Պետութեան եւ հասարակական ու անհատական հաստատութիւններուն, որոնք երբեմն ձեռք ձեռքի տալով, շատ յաճախ ալ գիրար ամբողջացնելով՝ սատարեն իրենց ժողովուրդի զարգացման: Ի չգոյութիւն «Սփիւռքահայ Պետութեան», այս հարցի լուծման նախաձեռնողները պէտք է ըլլան հայկական հաստատութիւններն ու միութիւնները՝ իրենց ներկայացուցած ազգային-եկեղեցական-հասարակական կազմակերպութիւններով եւ մետիայով (media), ինչպէս նաեւ մենք՝ որպէս գիրով, գրականութեամբ եւ սերունդներու դաստիարակութեամբ զբաղող անհատներ, իւրաքանչիւրս իր կարողութիւններով եւ հմտութիւններով, որոնք բնաւ չեն պակսիր, եթէ անշուշտ ճիշդ ձեւով օգտագործուին: Այո՛, մենք ունինք ուժեր եւ արժէքներ, որոնք մեծապէս կրնան սատարել այս եւ նման հարցերու լուծման:*

*Սակայն ո՞ւր են անոնք: Պատմականօրէն՝ հայերս բացառիկ կարողութիւնը ունինք նեղացնելու ու խրտչեցնելու մեր հանճարներն ու արժէքները, որոնք շատ յաճախ հայութեան մէջ գործելադաշտ չգտնելով եւ կամ սրտնեղած՝ կը փնտռեն ու կը գտնեն օտար դաշտեր, ուր կ՚աշխատին ու կը փայլին որպէս անհատ աշխարհաքաղա-քացիներ եւ բնականաբար այլեւս Հայ չեն մնար:*

*Ունինք նաեւ այլ մոլութիւն մը, որն է տեղ տալ միջակութիւններուն, որոնցմով դժբախտաբար քիչ բացառութեամբ կը ղեկավարուին մեր ազգային եւ կրթական հաստատութիւնները, պատճառ դառնալով անոնց ձախողութեան: Այս մոլութիւնը եթէ չսրբագրուի՝ արժէքաւոր տղաք պիտի շարունակեն երթալ աշխատելու օտար դաշտերուն մէջ՝ փառք ու պատիւ ստանալու լուրջ ամպիոններու վրայ, իսկ հայկական հաստատութիւնները պիտի չկարենան կատարել իրենց վստահուած լուրջ դերը:*

